



ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆԻ

10 ՏԱՐԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԻՐԱԿԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

ՀՀ-ՈՒՄ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սեռական բռնության ճգնաժամային
կենտրոնի տասնամյա գործունեության
ամփոփում

Ջեկույցը պատրաստվել է **«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն»**
հասարակական կազմակերպության մասնագետների կողմից՝

Նվարդ Փիլիպոսյան, իրավաբան, փաստաբան

Սիրանուշ Դավթյան, հոգեբան-խորհրդատու, կլինիկական հոգեբան

Աննա Յովհաննիսյան, շահերի պաշտպանության մասնագետ

Գրքի ձևավորումը՝ **Տաթևիկ Սայադյան**

Սրբագրիչ՝ **Ալետա Հակոբյան**

Սույն փաստաթղթի նպատակն է պետական համակարգին և լայն հանրությանը ծանոթացնել սեռական բռնության իրավիճակին ՀՀ-ում: Ջեկույցի շրջանակներում անդրադարձ է կատարվել Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի տասնամյա գործունեությանը:

Ջեկույցից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծանոթագրություն	6
Ներածություն	8
Զեկույցի կառուցվածքը	11

Մաս I Սեռական բռնության ենթարկված անձի հոգեբանական տրավմայի առանձնահատկությունները և գոհակենտրոն մոտեցումը դատաիրավական համակարգում

Սեռական բռնությունը որպես հոգեբանական տրավմա առաջացնող հիմնական գործոն	13
Երկրորդային գոհականացում. հիմնական առանձնահատկություններն ու հետևանքները	18
«Զոհակենտրոն» մոտեցման առանձնահատկություններն արդարադատության համակարգում	21
Անձնական կյանքի գաղտնիության իրավունքը և «բարոյականության» շահարկումը	28
Կուսության ստուգման բացասական ազդեցությունը	33

**Մաս II Սեռական բռնության օրենսդրական կարգավորումները և տեսակները,
սեռական հարաբերության համաձայնությունը**

Սեռական հարաբերության համաձայնության վերաբերյալ միջազգային իրավական փորձը 39

«Սեռական հարաբերության համաձայնության» եզրույթի սահմանումը հոգեբանական տեսանկյունից և դրսևորման հիմնական առանձնահատկությունները 45

Սեռական բռնության տեսակների ոչ լիարժեք արտացոլումը ՀՀ օրենսդրության մեջ 47

Սեռական բռնության իրավիճակի վերլուծության ամփոփում 53

Առաջարկություններ 55

Մաս III Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն. գործունեության անդրադարձ

2008-2018 թթ. Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի կողմից ծառայություններ ստացած դեպքերի վերաբերյալ քանակական տվյալներ վերլուծություն 59

ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ ոստիկանության 2017-2018 թթ. համար տրամադրած տեղեկություն 87

Քանակական տվյալների ամփոփում 95

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի մասին 99

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սեռական բռնությունը սահմանվում է որպես ցանկացած սեռական ակտ, սեռական ակտի փորձ, սեռական բնույթի անցանկալի մեկնաբանություն կամ առաջարկ, կամ այլ հարկադրանքի կիրառում ուղղված անձի սեռականությանը՝ անկախ բռնարարի հետ հարաբերություններից՝ ներառյալ տանը և աշխատավայրում¹: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ սեռական բռնությունը հանրային առողջության լուրջ հիմնախնդիր է և գենդերային բռնության տեսակ:

Սեռական բռնությունն առկա է, երբ որևէ անձ ստիպում կամ մանիպուլացնում է մեկ այլ անձի վերջինիս համաձայնության բացակայության պայմաններում ոչ ցանկալի սեռական ակտիվություն ունենալ²:

Սեռական բռնության իրական պատկերի վերաբերյալ համապարփակ տվյալներ գոյություն չունեն, սակայն ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ ամբողջ աշխարհում կանանց 35%-ը իրենց կյանքի ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և/կամ սեռական բռնության զուգընկերոջ կողմից, կամ սեռական բռնության անձանոթի կողմից³:

Համաձայն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի՝ ամբողջ աշխարհում շուրջ 120 մլն աղջիկ (կամ 10-ից մեկը) ենթարկվել է սեռական բռնության կամ բռնի սեռական գործողությունների կյանքի որևէ փուլում⁴:

ՀՀ-ում սեռական բռնությունը նույնացվում է սեռական հանցագործությունների, այսինքն՝ սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների հետ: Սակայն սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության հասկացությունները ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չեն և տրվում են քրեական իրավունքի տեսության մեջ:

¹Տե՛ս https://www.who.int/violence_injury_prevention/violence/global_campaign/en/chap6.pdf

²Տե՛ս https://www.nsvrc.org/sites/default/files/Publications_NSVRC_Factsheet_What-is-sexual-violence_1.pdf

³Տե՛ս <http://www.unwomen.org/en/what-we-do/ending-violence-against-women/facts-and-figures>

⁴Տե՛ս <https://www.unicef.org/mena/press-releases/nearly-one-in-four-adolescent-girls-experience-physical-violence>

Այսպես, սեռական ազատությունը 16 տարին լրացած հոգեպես առողջ մարդու իրավունքն է՝ ինքնուրույն, առանց որևէ հարկադրանքի որոշելու, թե ում հետ և ինչ ձևով բավարարել իր սեռական պահանջներ⁵:

Սեռական անձեռնմխելիությունը բարոյաիրավական արգելք է սեռական շփման մեջ մտնել այնպիսի անձանց հետ, որոնք օժտված չեն սեռական ազատությամբ, քանի որ ունակ չեն հասկանալու իրենց նկատմամբ կատարվող սեքսուալ բնույթի գործողությունների նշանակությունը և հետևանքները կամ ղեկավարելու իրենց գործողությունները սեռական շփման ոլորտում⁶: ՉՉ-ում սեռական անձեռնմխելիությամբ օժտված են 16 տարին չլրացած անձինք:

Սեռական բռնությունից տուժում են հիմնականում կանայք ու աղջիկները, բայց այն կարող է տեղի ունենալ նաև տղամարդկանց և տղաների հետ: Սեռական բռնությունից տուժած բոլոր անձինք պետք է ունենան արդարադատության մատչելիություն և պաշտպանված լինեն թե՛ դատավարության, թե՛ սոցիալական աջակցություն ստանալու ընթացքում: Գիտակցելով, որ տղամարդկանց և տղաների սեռական բռնությունը չուսումնասիրված արդի հիմնախնդիր է, որը մնում է չբարձրաձայնված, «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՉԿ-ի (այսուհետ՝ ՍԲՃԿ) փորձը, որը հիմք է ծառայել սույն հետազոտության մշակման համար, վերաբերում է հիմնականում կանանց և աղջիկներին, և հետևաբար վերլուծությունը կդիտարկի սեռական բռնության ենթարկված կանանց և աղջիկներին՝ որպես առանձին խմբի առանձնահատկությունները:

Չաշվի առնելով դեպքերի դիմելիության ժամանակահատվածը՝ սույն զեկույցի քանակական հատվածում մանրամասն վեր են լուծվել 2016-2018 թթ. դեպքերը, մինչդեռ զեկույցի որակական բաժնի համար հիմք են ծառայել 2008-2018 թթ. ՍԲՃԿ-ին դիմած անձանց դեպքերը, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից ուսումնասիրված դեպքերը և միջազգային փորձը:

⁵ Տե՛ս Кудрявцев В.Н., Лунеев В.В. О криминологической классификации преступлений// Государство и право, 2005, №6, էջ 55:

⁶ Տե՛ս Իսրայելյան Գ. Վ., Սեռական հանցագործությունները և դրանց կանխումը ՉՉ-ում: Մենագրություն: Երևան, 2012, էջ 9-10:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանանց և տղամարդկանց հավասարությունը և կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացումը ցանկացած ժողովրդավարական պետության կարևոր երաշխիքներից է: Այնուամենայնիվ, աշխարհի տարբեր ժողովրդավարական երկրներում կանայք ամեն օր շարունակում են բախվել խտրականության տարբեր դրսևորումների, այդ թվում՝ սեռական բռնության:

ՀՀ-ում կանանց կարգավիճակի, կանանց նկատմամբ խտրականության տարբեր դրսևորումների վերաբերյալ առկա են մի շարք հետազոտություններ, որոնք ներկայացնում են հասարակական-քաղաքական կյանքում հանդիպող գենդերային անհավասարությունից բխող տարատեսակ խնդիրներ⁷: Առկա խտրական պատմույթը, որը հանգեցնում է կանանց իրավունքների ոտնահարմանը, ներառյալ՝ նրանց նկատմամբ տարբեր հանցագործությունների և այլ բռնությունների կատարմանը, հաճախ պայմանավորված է տարբեր ոլորտներում տղամարդկանց նախապատվություն տալու հանգամանքով: Հայրիշխանական նորմերի վրա հիմնված հասարակական մոտեցումներն ու դատողություններն առկա են կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ ոտնահարելով կանանց իրավունքները:

Համաձայն «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման» (այսուհետ՝ ԿՆԽԲՁ) մասին կոնվենցիայի, որը Հայաստանը վավերացրել է 1993 թվականին՝ մասնակից երկրները պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները հասցեագրելու և պայքարելու առկա խտրական վերաբերմունքի, սովորույթների և այլ պրակտիկաների վերացման դեմ, որոնք բխում են գենդերային կարծրատիպերից⁸: 2016 թ.-ին ՀՀ կառավարությանն ուղղված ամփոփիչ դիտարկումներում ԿՆԽԲՁՎ Կոմիտեն հայտնեց իր մտահոգությունը երկրում արմատացած գենդերային կարծրատիպերի և հայրիշխանական վերաբերմունքի կապակցությամբ և առաջարկեց պետությանը ձեռնարկել դրանց մեղմացմանն ուղղված հրատապ և գործնական միջոցառումներ⁹:

Հանրապետության ողջ տարածքում 2016 թ. անցկացված հարցման համաձայն՝ տղամարդ գուգրնկեր ունեցած կանանց 22.4%-ը և 45.9%-ը ենթարկվել է համապատասխանաբար ֆիզիկական և հոգեբանական բռնության:

⁷ Տե՛ս ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի կողմից իրականացված մի շարք թեմատիկ հետազոտություններ: Մանրամասն տե՛ս <http://www.yso.am/gender/>

⁸ Տե՛ս ԿՆԽԲՁՎ/CEDAW, Յոդվածներ, 2(գ), 5(ա) և 5(բ)

⁹ Տե՛ս Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia, 2016 November, <https://documents-dds-ny.un.org/doc/UN-DOC/GEN/N16/402/28/PDF/N1640228.pdf?OpenElement>

Տղամարդ գուգընկեր ունեցած կանանց 19.5%-ն էլ նշել է, որ իրենց գուգընկերն արգելել է աշխատանքի անցնել կամ որևէ կերպ գումար վաստակել:

Իսկ հարցմանը մասնակցած տղամարդկանց 7.6%-ը նշել է, որ ստիպել է որևէ կնոջ կամ աղջկա իր հետ սեռական հարաբերություն ունենալ¹⁰: Այս ցուցանիշը ենթադրյալ բռնարարների հնչեցրած տվյալն է, ինչը նշանակում է, որ իրական թիվն անհամեմատ մեծ է, իսկ այդ ցուցանիշը գիտակցված, կամային և միտումնավոր կատարված արարքների միայն մի մասն է:

Կանանց նկատմամբ բռնությունը դադարեցնելուն ուղղված բոլոր ջանքերը «հակասության մեջ են մտնում» ավելի մեծ իշխանություն ունեցող տղամարդկանց շահերի հետ, քանի որ այդ տղամարդկանց հենց կարգավիճակն է խրախուսում, երբեմն նաև պարտադրում կիրառել այդ բռնությունն իրենց իսկ գուգընկերների նկատմամբ¹¹:

Հասարակության մեջ առկա ընդհանուր պատկերացումները մատնանշում են, որ կինը պետք է լինի այնքան «խելացի, հնազանդ, իմաստուն և առաքինի», որ կարողանա կանխարգելել սեռական բռնությունը: Ըստ կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների՝ ընտանիքի ներսում բռնության ենթարկվելը դեռևս կարող է քննադատվել հասարակության որոշ խմբերի կողմից, մինչդեռ սեռական բռնության ենթարկվելու ողջ մեղքը դրվում է կնոջ վրա: Սեռական բռնության պարագայում կինը մշտապես դիտվում է բռնության, ոտնձգության «հրահրող» կամ «սադրիչ»: Կինը «հրահրում է» սեռական բռնությունն իր հագուստով, վարքով և անգամ սանրվածքով ու շպարով: Իրավապահ համակարգը, որպես կանոն, վերարտադրում է նույն վարքի մոդելը՝ ենթարկելով կրկնակի տրավմայի արդեն իսկ բռնություն վերապրած կնոջը: ՀՀ-ում շատ կանանց համար արդարության հաստատումն անիրականանալի գործընթաց է:¹²

Կնոջ ստորադասումը, արմատացած գենդերային կարծրատիպերը, սեռականության վերաբերյալ խոսելու տաբուն, սեռական բռնության ենթարկված անձի կողմից քննադատվելու, դատապարտվելու և պիտակավորվելու վախը ետ է պահում շատ անձանց խոսելու իրենց հետ տեղի ունեցած բռնաբարության, սեռական ոտնձգությունների, հարկադիր ամուսնությունների մասին, ինչի արդյունքում այս հանցագործությունները համարվում են քողարկված/լատենտային:

¹⁰ Տե՛ս Վլադիմիր Օսիպով և Ջինա Սարգիզովա, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրները Հայաստանում, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, Երևան, 2016, էջ 105:

¹¹ Տե՛ս Քամիլբել Զ., Ռուսյան Բ. «Կնասպանություն», հրավիրված խմբագիրներ, Ներածություն, Սպանությունների ուսումնասիրություն ամագիր, 1998; 2 (4), էջ 347-352:

¹² Տե՛ս «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա, «Օրինականացնելով գենդերային կարծրատիպերը՝ ՀՀ դատական համակարգն ու գենդերային խտրականությունը գենդերային հիմքով ընտանեկան բռնությունների գործերը քննելիս» զեկույց, Երևան, 2017, էջ 42:

Ու չնայած արմատացած կարծրատիպերը լռեցնում են սեռական բռնության ենթարկված անձանց, սեռական բռնության հոգեբանական հետևանքներն ուղեկցում են այդ անձին իր ողջ կյանքի ընթացքում:

Բռնաբարության ենթարկված կանանց 94%-ի մոտ առկա է հետտրավմատիկ սթրեսային խանգարում սեռական բռնության ենթարկվելուց հետո 2 շաբաթների ընթացքում:¹³

Բռնաբարված կանանց 33%-ի մոտ դեպքից հետո առաջանում են ինքնասպանության մտքեր¹⁴: Սեռական բռնության հոգեբանական հետևանքները շատ ավելի ծանր են, քան ցանկացած այլ տեսակի բռնության: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ պատերազմին մասնակցած անձը և բռնաբարված կինն ունեն գրեթե նույն հոգեբանական խնդիրները¹⁵:

Հայաստանում կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը, մասնավորապես՝ սեռական բռնությունը, այն խնդիրներից է, որը մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպություններին և իրավագիտակից քաղաքացիներին մտահոգության տեղիք է տալիս և պահանջում միասնական ջանքեր խնդրի դեմ պայքարելու համար:

ՍԲԾԿ-ի և ՀՀ քննչական կոմիտեի համատեղ հետազոտության ընթացքում պարզվել է, որ սեռական բռնության դեպքերով հարուցված քրեական գործերով 2015 թ.-ին սեռական բռնության ենթարկված 142 տուժողներից 131-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին (տուժողների 92.3%ը),¹⁶ իսկ 2016 թ.-ին՝ 162 տուժողներից 151-ը (տուժողների 93.2%-ը)¹⁷:

Հետևաբար կարելի է պնդել, որ սեռական բռնությունը ՀՀ-ում կանանց հիմնախնդիր է՝ անգամ այն բարձր լատենտայնության պայմաններում, որը բնութագրական է սեռական բռնությանը:

Հաշվի առնելով, որ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ սեռական բռնության լատենտայնությունը տատանվում է 70-80%՝ վերը նշված վիճակագրությունն արտացոլում է ամեն 5-րդ դեպքը:

¹³ Տե՛ս D.S. Riggs, T. Murdock, W. Walsh, A prospective examination of post-traumatic stress disorder in rape victims. Journal of Traumatic Stress, 1992, էջեր 455-475:

¹⁴ Տե՛ս DG Kilpatrick, CN Edumuds, AK Seymour. Rape in America: A Report to the Nation. Arlington, VA: National Victim Center and Medical University of South Carolina, 1992

¹⁵ Տե՛ս Department of Justice, Office of Justice Programs, Bureau of Justice Statistics, Socio-emotional Impact of Violent Crime, 2014.

¹⁶ 2015-2016 թթ. սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները, Երևան, 2017, էջ 14:

¹⁷ Նույն տեղում, էջ 20:

ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Չայաստանում շատ քիչ է հետազոտվում, ուսումնասիրվում և առհասարակ խոսվում սեռական բռնության մասին, այն էլ հիմնականում նեղ մասնագիտական շրջանակներում: Այս զեկույցն առաջինն է, որ լայն հասարակության համար բարձրաձայնում է սեռական բռնության ենթարկված կանանց և աղջիկների ծայր ու վերհանում արդարադատության մատչելիության որոշ հիմնախնդիրները:

Զեկույցի հիմնական նպատակն է առանձնացնել սեռական բռնության վերաբերյալ առկա հիմնական խնդիրները ԶԶ-ում, համադրել դրանք ուսումնասիրված միջազգային փորձի հետ և առաջարկել հնարավոր պրակտիկ լուծումներ:

Սույն զեկույցը բաղկացած է 3 հիմնական հատվածներից: Զեկույցի առաջին և երկրորդ հատվածներում անդրադարձ է կատարվում դատաիրավական համակարգի խնդիրներին, որոնք խոչընդոտում են սեռական բռնության ենթարկված կանանց և աղջիկների արդարադատության մատչելիությանը, ներկայացվում են սեռական բռնության հոգեբանական հետևանքները, դրանից բխող զոհակենտրոն մոտեցման ներդրման անհրաժեշտությունը սոցիալական և դատաիրավական համակարգում, ինչպես նաև վերլուծվում են օրենսդրական որոշ կարգավորումները և իրավակիրառ պրակտիկայում առկա բացերը:

Երրորդ հատվածում նկարագրվում է ՄԲԾԿ-ի գործունեության 10-ամյա պատմությունը, քանակական տվյալների միջոցով ներկայացվում են 2008-2018 թթ. կենտրոնի կողմից ծառայություններ ստացած դեպքերի քանակական բնութագրիչները:

Զեկույցն ամփոփվում է հիմնական խնդիրների առանձնացմամբ և պրակտիկ առաջարկներով, որոնք կօգնեն բարելավել ոլորտը և դարձնել օրենսդրությունն ու ծառայություններն առավել հասցեական ու զոհակենտրոն:

Զեկույցի մշակման աշխատանքներում ներգրավվել է բազմամասնագիտական խումբ, որի անդամներն իրականացրել են ոլորտի հոգեբանական, իրավական և սոցիալական վերլուծություն: Զեկույցի պատրաստման համար օգտագործվել են կազմակերպության շահառուների հարցազրույցներից անանուն մեջբերումներ: Քանի որ դեպքերի մեծամասնությունով քննությունը դեռ շարունակվում է, իսկ ավարտված գործերի մեծ մասը եղել են դռնփակ, նախաքննության գաղտնիքի և անձնական տվյալների պաշտպանության նկատառումներով դեպքերի մանրամասները չեն ներկայացվում զեկույցում:

Զեկույցի մշակման համար հիմք են ծառայել նաև ազգային օրենսդրությունը և պրակտիկան, ՄԱԿ-ի, ԱԶԿ-ի և ԵԽ-ի մի շարք փաստաթղթերը, ինչպես նաև այլ երկրների առաջադեմ փորձը սեռական բռնության կանխարգելման և բացահայտման, ինչպես նաև զոհերի պաշտպանության ոլորտում:

Մաս I

Սեռական բռնության ենթարկված անձի հոգեբանական տրավմայի առանձնահատկությունները և զրհակենտրոն մոտեցումը դատաիրավական համակարգում

Սեռական բռնությունը որպես հոգեբանական տրավմա առաջացնող հիմնական գործոն

Սեռական բռնությունը բազմաթիվ հետևանքներ է թողնում բռնության ենթարկված անձի վրա՝ ազդելով հոգեկան առողջությանը, մասնավորապես՝ բռնության ենթարկված անձը փոխում է վերաբերմունքն ինքն իր, մտերիմ հարաբերությունների շրջանակի, համայնքի և իր անցյալի, ներկայի և ապագայի ընկալման նկատմամբ: Սեռական բռնության հետևանքները հոգեկան առողջության վրա կարելի է բաժանել 3 խմբի՝

1. կարճատև,
2. միջին տևողության,
3. երկարատև:

Այսպես, կատարվածից անմիջապես հետո, մեկ կամ մի քանի ամիս անց բռնության ենթարկված անձի մոտ հոգեբանական տեսանկյունից տարբեր հետևանքներ կարող են դիտարկվել, որոնք իրենց հերթին կարող են արտահայտվել *վարքային, կոգնիտիվ և հուզական մակարդակներում*¹⁸:

Փորձելով անդրադարձկատարել հոգեբանական տրավմայի առանձնահատկություններին՝ հարկ է նշել, որ տրավմատիկ են համարվում այն իրադարձությունները, որոնք գերազանցում են օրգանիզմի հարմարման սովորական կարողությունները, և ներառում են մարդու կյանքի և ֆիզիկական ամբողջականության նկատմամբ վտանգ: Հոգեբանական տրավմայի առաջացմանը հանգեցնող կամ հավանականորեն հանգեցնող առավել տարածված գործոններ են հանկարծակի հարձակումը, բռնաբարությունը, պատերազմը, տարերային աղետները, մանկության տարիներին սեռական բռնության ենթարկվելը և այլն¹⁹:

Սեռական բռնության հոգեբանական հետևանքները, ինչպես վերը նշված է, կարող են դրսևորվել հուզական, վարքային և կոգնիտիվ մակարդակներում: Այսպես, սեռական բռնության ենթարկված անձի հիմնական հուզական ռեակցիաները հետևյալն են՝ **վախ, տագնապ, տառապանք, դեպրեսիա, ամոթ, մեղք և ապաթիա**: Հատկապես ուշագրավ են սեռական բռնության ենթարկված անձի մոտ դրսևորվող վախերը, որոնք առանձնահատուկ են այս դեպքերի համար:

¹⁸ Տե՛ս Josse E., They came with two guns': the consequences of sexual violence for the mental health of women in armed conflicts. International Review of the Red Cross, 2010, էջեր 177-195:

¹⁹ Տե՛ս https://www.sagepub.com/sites/default/files/upm-binaries/11559_Chapter_1.pdf

Հատկապես ուշագրավ են սեռական բռնության ենթարկված անձի մոտ դրսևորվող վախերը, որոնք առանձնահատուկ են այս դեպքերի համար: Մասնագիտական գրականությունում և ՍՃԲԿ-ի կողմից աջակցություն ստացած դեպքերում հատկապես հանդիպում են դեպքի կրկնման վախը, վախն իրավիճակներից, որոնք կարող են հիշեցնել սեռական բռնությունը, վախը՝ սեռական բռնության արդյունքում առաջացած բժշկական և սոցիալական հետևանքներից, մասնավորապես՝ սեռավարակով վարակվելուց, հղիությունից և այլն:

Ես անընդհատ վախենում էի, որ կրկնվելու է այդ ամենը. առավոտյան սուր վախի զգացողություն ունեի, հատկապես այն ժամին մոտ, որ ժամին, որ դեպքն էր կատարվել ու վախս անուն ուներ նույնիսկ. միայն թե չկրկնվի այդ դժոխքը:
Դ., 37 տ.

Սեռական բռնության ենթարկված անձանց մոտ հաճախ հանդիպում են նաև ֆիզիոլոգիական խնդիրներ, որոնք չունեն ոչ մի ֆունկցիոնալ հիմք, օրինակ՝ ցավեր հատկապես ստամոքսի շրջանում, մկանային ցավեր, գլխացավեր, ասթենիա, նեյրովեգետատիվ ռեակցիաներ՝ սրտխփոց, տախիկարդիա, դժվարացած շնչառություն, առատ քրտնարտադրություն, սեռական դիսֆունկցիաներ՝ սեռական ցանկության բացակայություն կամ անկում, սեռական ցանկության ակտիվացում, վագինիզմ, մենստրուալ ցիկլի խնդիրներ՝ ցիկլի բացակայություն, ցավոտ ցիկլ, անկանոն ցիկլ, կոնվերսիոն խանգարումներ՝ ձեռքի մկանների անշարժացում, խոսելու անկարողություն, կուրություն: Կարող են դիտվել նաև սոմատիկ խնդիրներ՝ աղեստամոքսային համակարգի, սրտանոթային համակարգի՝ ճնշման տատանումներ, շնչառական համակարգի՝ շնչարգելություն, մաշկային՝ էկզեմա, ալերգիկ ցան, էնդոկրին համակարգի խանգարումներ՝ դիաբետ և այլ օրգան-համակարգերի հետ կապված խնդիրներ:

Անբացատրելի գլխացավեր ունեմ, սրտխփոց ու մաշկի քոր, ու այս ամենը ոչ մի օրգանական խնդրի հետ կապված չի: Բժիշկներն այդպես էլ չկարողացան գտնել պատճառը...

Գ., 22 տ.

Անդրադառնալով հաճախ հանդիպող կոգնիտիվ ախտանիշներին՝ առանձնացնենք հատկապես կրկնողության համախտանիշը և իրավիճակը նորից վերապրելու տպավորությունը, որ դրսևորվում է հիմնականում **ֆլեշբեքերով** (ֆլեշբեքերի պարագայում սեռական բռնության ենթարկված անձն այնպիսի զգացողություն է ունենում, կամ այնպիսի վարք է ցուցաբերում, ասես տրավմատիկ իրողությունը հենց այդ պահին է կատարվում)՝ հիմնականում տեսողական «առկայծումների» տեսքով, բայց կարող են լինել նաև հոտառական, լսողական առկայծումներ²⁰: Կրկնողության համախտանիշը դրսևորվում է հիշողության կրկնություններով և ներխուժումով, որը տարբեր է ֆլեշբեքից, քանի որ անձը հստակ հասկանում է, որ դա հիշողություն է՝ կապված սեռական բռնության հետ, մղձավանջային կրկնվող երազներով, վախով, որ իրավիճակը կարող է կրկնվել, հատկապես, եթե արտաքին նման գործոններ են լինում՝ դռան բացել-փակել, անսպասելի աղմուկ և այլն:

Սեռական բռնության ենթարկված անձանց մոտ հաճախ հանդիպում են հիշողության խնդիրներ՝ տրավմատիկ ամնեզիա՝ անձը չի հիշում դեպքի հետ կապված մանրամասներ կամ ամբողջությամբ կատարվածը, ըստ այդմ կարելի է դիտարկել, որ սեռական բռնության ենթարկված անձը ունի ամբողջական կամ մասնակի տրավմատիկ ամնեզիա, տրավմատիկ հիպերմնեզիա՝ ամեն ինչ հիշել ամենայն մանրամասնությամբ, դետալներով, նոր ինֆորմացիա հիշելու դժվարություններ:

Ես երբեք հիշողության խնդիրներ չեմ ունեցել, բայց այս դեպքից հետո, հատկապես, երբ ստիպում էի ինձ ինչ-որ մանրամասներ հիշել կատարվածի վերաբերյալ, հասկանում էի, որ լիքը բան չեմ հիշում: Հիշում եմ, որ միասին մտանք այդ տարածք, հիշում եմ, որ սկսեց դիպչել ինձ, ինձ այդ ամենը տհաճ էր, հիշում եմ, որ ինքը հայտնվեց իմ վրա, ու հիշում եմ արդեն ինձ դրսևորում: Այդ ընթացքը իմ հիշողությունից ջնջվել է: Բայց այս ամենին ի հակադրություն՝ ամեն անգամ, երբ ընկերս փորձում է ինձ դիպչել, և զգում եմ այդ տհաճությունը, կորցնում եմ առկա իրականությունս ու սկսում եմ ամբողջ մարմնով դողալ:
Ս., 19 տարեկան.

²⁰ Stéu Josse E., They came with two guns': the consequences of sexual violence for the mental health of women in armed conflicts. *International Review of the Red Cross*, 2010 էջեր 177-195:

Մյուս տարածված ախտանիշը դիսոցացիան է, (դիսոցացիան օգտագործվում է նկարագրելու հաղորդակցման բացակայությունը կամ հաղորդակցման դժվարությունների և խոտանների շարքը այն երևույթների միջև, որոնք սովորաբար կապված և ասոցացված են միմյանց: Դիսոցացիան նորմալ ռեակցիա է տրավմատիկ իրողությանը և սեռական բռնության դեպքում հաճախ հոգեբանական քարացման հետ է նույնացվում, որի առավել տարածված դրսևորումներն են դեպերսոնալիզացիան, որը դրսևորվում է սեփական անձի ընկալման աղճատման ձևով. որոշ այցելուներ նշում են, որ իրենց մարմնից կարծես առանձնացված լինեն, կողքից են տեսնում իրավիճակը, դեռեալիզացիան՝ շրջապատող իրականության ընկալման խնդիրներ՝ իր շուրջն առկա իրերի կամ մարդկանց որպես օտարի կամ անծանոթի ընկալում:

Առավել տարածված ախտանիշներից է նաև *շփոթվածությունը*, որը հիմնականում դրսևորվում է ուշադրության կենտրոնացման դժվարություններով և տարածական կողմնորոշման խնդիրներով, տարրական գործողություններ կատարելու դժվարություններով:

Սեռական բռնության ենթարկված անձանց մոտ *վարքային ախտանիշներն են՝ խուսափողական վարքը ցանկացած գրգռիչից, որ կարող է հիշեցնել տրավմատիկ իրողության մասին, գերգրգռվածությունը՝ անընդհատ վտանգի սպասումով, քնի խանգարումները, ուտելու խանգարումները, կախվածությունը տարբեր նյութերից, օրինակ՝ ալկոհոլից, դեղերի չարաշահումը, հիպոհեմալի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը՝ անընդհատ լվացվելու ցանկություն կամ հակառակը, հիպոհեմալին չհետևելը, միջանձնային հարաբերություններում խնդիրները, ինքնավնասման փորձերը, ինքնասպանության փորձերը, անհիմն ծիծաղը կամ լացը, հատկապես բացասական հույզերի հետ կապված պատմություններ պատմելիս, տանից դուրս գալն ու անհայտ ուղղությամբ կորչելը:*

Ամբողջ կյանքս տակնուվրա է եղել այս դեպքից հետո. չեմ կարողանում քնել, վախեր ունեմ, անհիմն կասկածներ բոլորի նկատմամբ, սկսել եմ հակառակ սեռի նկատմամբ տհաճություն զգալ, չեմ կարողանում կենտրոնանալ դասերիս վրա, հիշողությունս վատացել է և միևնույն ժամանակ, եթե սեռական բռնության հետ կապված խոսակցություն է գնում, ես ասես իմ վրա չզգամ դա, ասես իմ հետ չի եղել այդ ամենը:

Լ., 25 տարեկան

Հարկ է նշել, որ վերը նշված ախտանիշներն անհատական բնույթ են կրում և դրանցից շատերը կարելի է դիտել Չետտրավմատիկ սթրեսային խանգարման (այսուհետ՝ ՉՏՄԽ) դեպքում²¹: Ցավոք, բազմաթիվ հետազոտությունները և միջազգային փորձի վերլուծությունը ցույց են տալիս, որ սեռական բռնության ենթարկված անձանց 80%-ի մոտ ՉՏՄԽ առաջացման հավանականություն կա՝ համեմատած ընդհանուր տրավմատիկ կյանքի այլ իրողությունների, որոնք 24% են կազմում²²:

Այս ռիսկային գործոնի թիվը հասնում է 87% վաղ մանկական տարիքում սեռական բռնության ենթարկվելու պարագայում²³:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ սեռական բռնության ենթարկված անձինք, ի տարբերություն բռնության չենթարկված անձանց, կրկնակի հավանական է, որ կունենան ընկճախտ, կչարաշահեն ալկոհոլ, թմրանյութեր և իրենց վնասելու փորձեր կանեն²⁴:

Սեռական բռնությունը, որպես հոգեկան տրավմա առաջացնող գործոն, ունի իր յուրահատկությունները, որոնք էլ ավելի բացասական ազդեցություն են ունենում անձի հոգեկան վիճակի վրա.

1. Մինչ սեռական բռնության ենթարկվելը անձի ունեցած բացասական ռեակցիան սեռական բռնություն երևույթին, ինչը դառնում է ինքնաքննադատման, մեղքի զգացման, հասարակության կողմից մերժվելու, վախի և ամոթի, ցածր ինքնագնահատականի հիմքը:

2. Սեռական բռնության ենթարկված անձի՝ «զոհի» դերի նույնականացման և ընկալման աղճատումներ, երբ սեռական բռնության ենթարկված անձը չի կարողանում ընկալել, որ այդ իրավիճակում ինքն անմեղ է, իր հագուստը կամ բռնություն կիրառած անձի հետ նախկին հարաբերությունները բռնաբարության պատճառ չեն:

²¹ Չետտրավմատիկ սթրեսային խանգարումը, ըստ DSM-5-ի, ունի մի շարք հիմնական ցուցիչներ՝ որևէ տեսակի տրավմատիկ փորձի առկայություն, կաչուն ախտանիշներ, խուսափում տրավմա հիշեցնող գործոններից և իրավիճակներից, բացասական փոփոխություններ կոգնիտիվ մակարդակում և տրամադրությունում, գերգրգռվածություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ախտանիշները և դրանց մեկ ամսից ավել կրկնվելու դեպքում ազդեցություն են ունենում անձի ադապտացիայի և հարմարման վրա:

²² Տե՛ս Salmona D. M. (January 19, 2018). TRAUMATIC AMNESIA a dissociative survival mechanism, էջ 6-7:

²³ Նույն տեղում, էջ 6-7:

²⁴ Տե՛ս World Health Organization, Violence against women – Intimate partner and sexual violence against women. Geneva, 2011:.

3. Սեռական բռնության ենթարկված անձանց երկրորդային վիկտիմիզացիան/զոհականացումը հասարակության կողմից^{25 26}:

Այսպիսով՝ վերը նշված նյութից կարելի է հասկանալ, որ սեռական բռնությունը հոգետրավմա առաջացնող հիմնական ռիսկային գործոններից է և ազդեցություն է ունենում սեռական բռնության ենթարկված անձի վրա՝ արտահայտվելով վարքային, հուզական, սոմատիկ, ֆիզիոլոգիական ախտանիշներով, և ցավոք, մեծ է հավանականությունը, որ սեռական բռնության ենթարկված անձը կարող է ունենալ ՋՏՍԽ: Մինևույն ժամանակ սեռական բռնության ենթարկված անձն ավելի շատ է քննադատվում կատարվածի համար հասարակության կողմից կամ հնարավոր է, որ մինչ իր հետ կատարվածն ինքը ևս ունեցել է բացասական վերաբերմունք սեռական բռնության ենթարկված անձանց և սեռական բռնության երևույթի նկատմամբ:

Ուստի, հաշվի առնելով այդ ամենը, անհրաժեշտ է սեռական բռնության ենթարկված անձանց տրամադրվող աջակցությանն ավելի մեծ նշանակություն տալ, որը կիրականացվի բռնության ենթարկված անձի համար անվտանգ միջավայրում և համապատասխան վերապատրաստում անցած մասնագետների կողմից առանց քննադատության և առանց լրացուցիչ մեկնաբանությունների, որոնք էլ ավելի են մեծացնում սեռական բռնության ենթարկված անձանց կրկնակի տրավմատիզացիայի հավանականությունը:

Երկրորդային զոհականացում՝ հիմնական առանձնահատկություններն ու հետևանքները

Ինչպես նշվել է, սեռական բռնությունը մեծ ազդեցություն է ունենում սեռական բռնության ենթարկված անձի վրա թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական մակարդակներում: Սա նշանակում է, որ սեռական բռնության ենթարկված անձը կարող է տարբեր ինստիտուտների դիմել, օրինակ՝ առողջապահական, իրավաբանական, հոգեկան առողջության կենտրոններ՝ աջակցություն ստանալու նպատակով: Եվ ցավոք, ամբողջ աշխարհում, այդ թվում նաև ՀՀ-ում, սեռական բռնության ենթարկված անձի ռետրավմատիզացվելու հավանականությունը մեծ է:

Երկրորդային զոհականացումը²⁷ զոհականացման այն տեսակն է, որը կապված է ծառայություն մատուցող ինստիտուտների կամ անհատների՝ կատարվածին արձագանքի, այլ ոչ թե անմիջականորեն բռնության դեպքի հետ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ինստիտուցիոնալ երկրորդային զոհականացումն առավելապես կապված է արդարադատության համակարգում առկա խնդիրների հետ:

²⁵ Երկրորդային զոհականացման մասին ավելի մանրամասն տեղեկությունն առկա է հաշվետվության հաջորդիվ մասում:

²⁶ Տե՛ս Yuan Nicole P., K. M. The Psychological Consequences of Sexual Trauma, 2004:

²⁷ Մասնագիտական գրականության մեջ հայտնի է նաև «երկրորդ բռնաբարություն» տերմինով (Madigan&Gamble,1991):

Սեռական բռնության ենթարկված անձը, դիմելով համապատասխան իրավապահ մարմիններին, անցնում է բավական երկար և բարդ գործընթաց. ողջ գործընթացը՝ կատարվածի թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության տեսանկյունից, կարող է երկրորդային զոհականացման հանգեցնել, օրինակ՝ քննչական գործողություններ՝ դեպքի վայրի զննություն, հարցաքննություն, առերեսում, ինչպես նաև դատաբժշկական փորձաքննություններ կամ ցանկացած այլ տեսակի հետազոտություն, գաղտնիության խախտման ամենափոքր հավանականություն, և այս շարքը բավական երկար կարող է լինել և հստակորեն առաջացնել երկրորդային զոհականացում, եթե այդ գործողությունները չկազմակերպվեն՝ բռնության ենթարկված անձի հոգեբանական բարօրությունը հաշվի առնելով և կարևորելով:

Զանգվածային լրատվության միջոցներով դեպքի տարածումը, նկարների հրապարակումը, համապատասխան մասնագետների ներգրավումը, վերջիններիս հետադարձ կապերը սեռական բռնություն կատարած անձին ներելու կամ կատարվածը մոռանալու հետ կապված, այս կամ այն գործընթացում սեռական բռնության ենթարկված անձի մեղավորությունը փնտրելու միտումը կարող են երկրորդային զոհականացման պատճառ դառնալ:

Քանի որ ինձ անհրաժեշտ էր հոգեբույժի խորհրդատվություն, այցելեցի հոգեբույժին, պատմեցի կատարվածի մասին և նշեցի, որ իմ բողոքի հիման վրա քրեական գործ է հարուցվել: Հոգեբույժը պնդեց, որ հետ վերցնեմ բողոքս, որովհետև դա էլ ավելի է ծանրացնում իմ առկա խնդիրները, որոնք վերաբերում էին ամուսնուս հետ հարաբերություններին: Շատ լարվեցի այդ խոսակցությունից և սկսեցի մեղավոր զգալ ինձ, թե արդյոք ճիշտ եմ արել:

Ն., 37 տարեկան

Անհատական մակարդակում հետադարձ կապերը ևս կարևոր են սեռական բռնության ենթարկված անձանց համար (ընկերներ, ընտանիք, աշխատակիցներ, ուսուցիչներ և այլն), օրինակ՝ քննադատությունը կամ սեռական բռնության ենթարկված անձի հագուստի վերաբերյալ հետադարձ կապերը կարող են երկրորդային զոհականացման պատճառ դառնալ:

Համայնքը ևս կարող է նպաստել երկրորդային զոհականացման առաջացմանը, և առաջացման գործոնները պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում համայնքի էթնիկ, ռասայական, կրոնական պատկերացումների կամ այլ սոցիալական կոնֆլիկտների հետ, և հետևաբար կանխարգելման գործողությունները ենթադրում են համապատասխան ռազմավարությունների մշակում²⁸:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեն երկրորդային զոհականացման առաջացման երեք հիմնական պատճառներ՝

1. **սեռական բռնության վերաբերյալ առկա միֆերը**, մասնավորապես՝ սեռական բռնության ենթարկված անձի վարքն ու հագուստը դիտարկելը որպես սեռական բռնության պատճառ, կամ սեռական բռնության ենթարկված անձին դիտել որպես սեռական բռնությանը նպաստող, պրովոկացիա անող. այս մոտեցումը հաճախ կարող է արտահայտվել վարքում, բառերում, ուղիղ հետադարձ կապերում կամ խոսակցության ժամանակ տրվող հարցերում, որոնք շատ հաճախ ոչ միայն հետապնդում են ճշմարտությունը պարզելու, այլև կարող են հանգեցնել երկրորդային զոհականացմանը: Օրինակ՝ եթե գնում էիք միասին հյուրանոց, չէի՞ր պատկերացնում, որ կարող է սեռական հարաբերություն լինի ձեր միջև: Այս հարցի փոխարեն ցանկալի է տալ ընդհանրական հարց՝ ի՞նչ նպատակով էիք գնում հյուրանոց: Եթե ի սկզբանե հյուրանոց գնալու նպատակը պարզ է, նման հարց ընդհանրապես պետք չէ տալ:

2. Երկրորդ պատճառն այն է, **թե ինչ չեն անում այն մարդիկ**, որոնք առնչություն են ունենում կամ ծառայություն են մատուցում սեռական բռնության ենթարկված անձին, օրինակ՝ հնարավոր սեռավարակներից խուսափելու համար համապատասխան և համապարփակ հետազոտությունների իրականացման ուղղորդում, կամ հղիության կանխարգելման անհրաժեշտ քայլերի բացատրում և այլն:

3. Երրորդ պատճառը **մատուցված ծառայությունների անարդյունավետությունն է**, որը հաճախ բարդացնում է սեռական բռնության ենթարկված անձանց հոգեբանական վիճակը և պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում նրանց կյանքի որակի և ինքնազգացողության հետ ²⁹:

²⁸ Տե՛ս Social Justice Research [sjr] pp683-sore-455501 November 19, 2. 1. (2002, November 19). Social Justice Research [sjr] pp683-sore-455501 November 19, 2002 16:37 Style file version June 4th, 2002 SoSecondary Victimization of Crime Victims by Criminal Proceedings. Social Justice Research [sjr] pp683-sore-455501 November 19, 2002 16:37 Style file version June 4th, 2002SoSociSocial Justice Research Vol. 15, No. 4. Stop Violence Against Women. (2013, August). Retrieved 04 16, 2019, from http://www.stopvaw.org/secondary_victimization

²⁹ Տե՛ս Social Justice Research [sjr] pp683-sore-455501 November 19, 2. 1. (2002, November 19). Social Justice Research [sjr] pp683-sore-455501 November 19, 2002 16:37 Style file version June 4th, 2002SoSecondary Victimization of Crime Victims by Criminal Proceedings. Social Justice Research [sjr] pp683-sore-455501 November 19, 2002 16:37 Style file version June 4th, 2002SoSociSocial Justice Research Vol. 15, No. 4. Stop Violence Against Women. (2013, August). Retrieved 04 16, 2019, from http://www.stopvaw.org/secondary_victimization

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ինստիտուցիոնալ ամեն կառույց իր ազդեցությունն ունի բռնության ենթարկված անձի հուզական վիճակի վրա. այսպես, սեռական բռնության ենթարկված անձը գնում է ոստիկանության համապատասխան բաժին և հաղորդում տալիս իր հետ կատարված հանցագործության մասին և դրանից հետո սկսվում են տարբեր գործողություններ, որոնց ընթացքում գործը վարող անձինք ունենում են պատկեր «ճիշտ զոհի» և «սխալ զոհի», և վիճակագրությունը ցույց է տալիս, որ հակված են աջակցելու ավելի շատ «ճիշտ զոհին». այս պարագայում «ճիշտ զոհ» համարվում է այն անձը, որը դեպքը պատմելիս լացում է, հաճախ նրա տեսքն անխնամ է և կաշկանդված³⁰:

Այսպիսով՝ սեռական բռնության դեպքերի թե՛ նախաքննության ու դատաքննության ընթացքում, և թե՛ ծառայություններ մատուցելիս հարկավոր է հաշվի առնել անձի հուզական վիճակը և հնարավոր հոգեբանական տրավմայի ազդեցությունը:

«Զոհակենտրոն» մոտեցման առանձնահատկություններն արդարադատության համակարգում

«Զոհակենտրոն» մոտեցումը սեռական բռնության ենթարկված անձի պահանջներին և կարիքներին միտված համակարգային մոտեցումն է, որի հիմնական նպատակը ծառայությունները զգայուն տրամադրելն է սեռական բռնության ենթարկված անձանց ոչ քննադատական միջավայրում: ՄԲԾԿ դեպքերի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ բռնության ենթարկված անձինք երկար ժամանակ ստիպված սպասում են բժշկական աջակցություն ստանալուն: Գերծանրաբեռնված ոստիկանական և քննչական ծառայողների օրակարգային հարցերից դուրս է մնում բռնության ենթարկված անձի կարիքները և հաճախ այս կամ այն գործընթացներում դրանք դառնում են բռնության ենթարկված անձի համար վնասակար փորձ: Ըստ ԱՄՆ Նյու Ջերսիի Նահանգի սեռական բռնության ենթարկված անձանց ծառայության մատուցման չափորոշիչների՝ «զոհակենտրոն» մոտեցում կիրառելու պարագայում բռնության ենթարկված անձի ցանկությունները, անվտանգությունը և ինքնազգացողությունը առաջնահերթ են անկախ իրավիճակի պատճառներից և գործընթացներից³¹: «Զոհակենտրոն» մոտեցման³² հիմնական սկզբունքները կարևոր է կազմակերպել արդարադատության համակարգում վերը

³⁰ Rebecca Campbell, "The community response to rape victims' experiences with legal, medical and mental health systems" American Journal of Community Psychology, Vol. 26, No 3, 1998.

³¹ Տե՛ս Christine Todd Whitman, P. V. Standards For Providing Services To Survivors Of Sexual Assault. New Jersey, 1998:

³² «Զոհակենտրոն» մոտեցման հիմնական սկզբունքները շարադրելիս հաշվի է առնվել Ստամբուլյան արձանագրության, Նյու Ջերսիի Նահանգի սեռական բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցման ստանդարտները և Բալթիմորյան սկզբունքները զոհակենտրոն մոտեցմամբ աշխատանքում՝ որպես առաջադեմ փորձ:

նշված կետերով՝ ներառելով նախաքննության, դատաքննության և դատավարության գործընթացները՝

✓ Ցանկացած գործողություն՝ կլինի դա հարցաքննություն, թե բժշկական հետազոտություն կազմակերպվում է առանձին տարածքում և անհրաժեշտության դեպքում սեռական բռնության ենթարկված անձը սպասում է առանձնասենյակում: Այսինքն՝ սեռական բռնության ենթարկված անձի պրիվատությունը պետք է պահպանվի հարցաքննության, ցանկացած հետազոտության բոլոր փուլերում՝ խուսափելով, օրինակ հաճախակի սենյակ այլ մարդկանց մուտքից կամ ներկայությունից³³ (Ստամբուլյան արձանագրություն կետ 83, 124),

✓ Ապահովվում է անձի անվտանգությունը և ապահովությունը. հարցաքննությունը կամ հետազոտությունը կազմակերպվում է այնպիսի պայմաններում, որոնք անվտանգ և ապահով են բռնության ենթարկված անձի համար (Ստամբուլյան արձանագրություն կետ 91, 93, 126, 239, 264),

✓ Հարցաքննությունը կամ ցանկացած գործողություն սեռական բռնության ենթարկված անձի հետ կազմակերպվում է վստահելի միջավայրում (Ստամբուլյան արձանագրություն կետ 129, 164),

✓ Սեռական բռնության ենթարկված անձից ստացվում էինֆորմացված համաձայնություն բոլոր գործընթացներին մասնակցելու և փաստերի հավաքման համար: (Ստամբուլյան արձանագրություն կետ 149, 165),

✓ Ոչ մի փաստաթուղթ կամ տեղեկատվություն չի հրապարակվում առանց բռնության ենթարկված անձի ցանկության և վերջինիս հետ քննարկման (տե՛ս Նյու Ջերսիի սեռական բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի ստանդարտների ցանկում),

✓ Եթե նույնիսկ անձը նշում է, որ վնասվածքներ չունի, կազմակերպվում է բժշկական միջամտություն (տե՛ս Նյու Ջերսիի սեռական բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի ստանդարտների ցանկում),

✓ Սեռական բռնության ենթարկված անձին տրվում է մանրամասն մեկնաբանություն և բացատրություն իր հետ կազմակերպվող բոլոր գործողությունների վերաբերյալ (տե՛ս Նյու Ջերսի սեռական բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի ստանդարտների ցանկում),

✓ Լինել օբյեկտիվ գործողություններում, ինչը չի բացառում ապրումակցմամբ մոտենալը բռնության ենթարկված անձին, ինչպես նաև զգայուն հարցադրումներում (Ստամբուլյան արձանագրություն կետ 162, 262, 263),

³³ Տե՛ս <https://www.ohchr.org/Documents/Publications/training8Rev1en.pdf>

✓ Գործողությունները կազմակերպվում են այնպես, որ սեռական բռնության ենթարկված անձը պատմի իր հետ կատարվածի մասին հնարավորինս քիչ հարցաքննությունների ընթացքում: Մինչ մանրամասն հարցաքննությունը նախընտրելի է հնարավորինս քիչ հարցեր տալ՝ հիմնականում հասկանալու և որոշելու մեղադրանքի բնույթը, բժշկական աջակցություն կազմակերպելու, ցանկացած ապացույց պահպանելու, վկաներին և հնարավոր մեղադրյալներին նույնականացնելու համար (Բալթիմորյան սկզբունքներ զոհակենտրոն մոտեցման աշխատանքում),³⁴

✓ Հարցաքննություն և ցանկացած այլ գործողություններ կազմակերպելիս հաշվի են առնվում հոգնածության կամ դիսթրեսի նշանները, կարևորվում են անհատական առանձնահատկությունները,

✓ Բռնության ենթարկված անձին տեղեկացվում է բռնություն կիրառած անձի ձերբակալության, կամ օրինակ, գրավի դիմաց ազատ արձակվելու մասին (տե՛ս Նյու Ջերսիի սեռական բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի ստանդարտների ցանկում),

✓ Փորձաքննությունն իրականացվում է երկու սեռի մասնագետների ներգրավմամբ,³⁵

✓ Սեռական բռնության ենթարկված անձի հետ քննարկվում է իր անվտանգության պլանը. ծանոթի կամ ընտանիքի անդամի կողմից սեռական բռնության ենթարկված անձն ապաստարանի կամ լրացուցիչ անվտանգության գործողությունների կազմակերպման կարիք է ունենում (Բալթիմորյան սկզբունքներ զոհակենտրոն մոտեցման աշխատանքում),

✓ Սեռական բռնության ենթարկված անձն ուղղորդվում է համապատասխան կենտրոններ, ինչը հնարավորություն է տալիս սեռական բռնության ենթարկված անձին մասնագիտական աջակցություն ստանալ (Բալթիմորյան սկզբունքներ զոհակենտրոն մոտեցման աշխատանքում):

Զոհակենտրոն մոտեցմամբ աշխատելը կարևոր է սեռական բռնության ենթարկված անձի համար՝ անկախ սոցիալ-տնտեսական կարգավիճակից, հոգեկան կամ ֆիզիկական խնդիրներից և այլն³⁶:

³⁴ Տե՛ս Baltimore Victim Center Approach. Հասանելի է՝ <https://victimsofcrime.org>

³⁵ Տե՛ս Alnutt, S. C. General principles of forensic report writing. Australian and New Zealand Journal of Psychiatry, 2000, էջեր 980-987:

³⁶ Տե՛ս Giffard, C. The torture reporting handbook: How to document and respond to allegations of torture within the international system for the. University of Essex. Human Rights Centre, 2000; Interview_Ethical and Clinical Considerations. Psychological Evaluation, 2009, էջեր 9-15:

Պատկերը Հայաստանում

Չոհակենտրոն մոտեցմամբ աշխատանքի համար երկրում պետք է լինի նպաստավոր օրենսդրական բազա և իրավակիրառ պրակտիկա: Ցավոք, Հայաստանում սեռական բռնության դեպքերով քրեական գործերի³⁷ քննությունը չի իրականացվում զոհակենտրոն մոտեցմամբ, ինչն արտահայտվում է ինչպես օրենսդրական բավարար կարգավորումների, այնպես էլ մասնագիտացված սոցիալական ծառայությունների, ոստիկանների, քննիչների, դատախազների և դատավորների բացակայությամբ, որոշ չափով բացառություն են կազմում երեխաների նկատմամբ կատարված սեռական բռնությունների դեպքերի քննությունները:

ՄԲԾԿ-ում դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տուժողներից շատերը երկրորդային զոհականացման են ենթարկվել պետական մարմինների հետ շփման առաջին իսկ օրերից: Սեռական բռնության դեպքերով քրեական գործերի քննությունն իրավապահ համակարգում (հարցաքննությունների քանակը, մասնակիցների կազմը, զգայունության, գաղտնիության կամ դատավարական որևէ այլ առանձնահատկություններ) չի տարբերվում այլ, օրինակ՝ սեփականության դեմ հանցագործությունների քննությունից: Դեռ ավելին, տուժողներից շատերը նշում են, որ քննիչները բազմիցս զգուշացրել են իրենց սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին, ինչը բացահայտ թերահավատություն է իրենց խոսքերի նկատմամբ: Տուժողները ստիպված են եղել դեպքի մանրամասները պատմել երբեմն մեկ տասնյակի հասնող բացատրությունների, հարցաքննությունների և առերեսումների ժամանակ, ինչը հոգեբանական ազդեցություն է ունեցել վերջիններիս վրա և փաստացի չի ազդել գործի քննության վրա:

Բազմաթիվ հարցաքննությունների ժամանակ քննիչների կողմից միևնույն հարցը տալը երբեմն հետապնդել է ոչ թե փաստերի ճշգրտման, այլ տուժողի արտահայտություններում հակասությունների հայտնաբերման նպատակ, ինչը քննիչները երբեմն օգտագործում են որպես վերջինիս խոսքերի անարժանահավատության հիմնավորում: Մինչդեռ տուժողը կարող է չհիշել դեպքի որոշ մանրամասներ՝ պայմանավորված հոգեբանական տրավմայով, շփոթել դրանց հերթականությունը կամ ունենալ հիշողության ժամանակավոր կորուստ, ինչպես վերը նկարագրված է:

³⁷ Սույն գեկույցի շրջանակներում սեռական բռնության դեպքերով քրեական գործեր են համարվում ՀՀ քրեական օրենսգրքի 138-142 հոդվածներով հարուցված քրեական գործերը:

Այսինքն՝ եթե իրավապահ մարմինների աշխատողները չունեն բավարար գիտելիք և հմտություններ զգայուն կերպով աշխատելու սեռական բռնության ենթարկված անձանց հետ, դա օբյեկտիվորեն կարող է ոչ միայն տուժողի երկրորդային զոհականացման պատճառ դառնալ, այլ նաև գործի քննությունը տանել փակուղի ու ազդել գործի քննության արդյունավետության վրա:

ՍԲՃԿ շահառուներից մեկը, ով ամուսնացած կին է և սեռական բռնության էր ենթարկվել իր գործընկերոջ կողմից, նշում է.

Մեր քննչական համակարգը մի թյուրիմացություն և նմանատիպ գործերի հարցում...

Նրանք սեռական ոտնձգությանը նայում են ինչպես տղամարդ, այլ ոչ թե որպես մասնագետ...

Քննիչները մի լավ ազդում են մարդու նյարդային և հոգեկան աշխարհի վրա: Անընդհատ ասում էին ինձ. «Ինչ ա եղել որ, մեծ մարդ ես»...

Քննիչն ինձ հարցաքննման էր կանչում աշխատանքային ժամից դուրս, օրինակ՝ երեկոյան 20:00, կամ ոչ աշխատանքային օրերին: Հարցաքննման ժամանակ փորձեր էին լինում վախեցնելու: Օրինակ՝ եթե ես մի բանը շատ էի պնդում, որ տենց է եղել, այլ ոչ թե իրենց ներկայացրած տարբերակով, քննիչը չգիտես ինչի որոշում էր ու ասում. «Նենց չանես գործը շուտ տամ վրեդ», ու իմ մոտ սկսվում էր մի տեսակ վախ ու անհասկանալի զգացողություն...

Առերեսման ժամանակ քննիչը բացահայտ ցույց տվեց իր կողմնակալությունը ու օգնում էր բռնարարին, իսկ ինձ հոգեբանորեն ճնշում էր:

Ամենաահավոր բանը, երբ քննիչը քեզ ասում ա. «Ի՞նչ ես ուզում մարդդ կողքդ ա, ընտանիքդ մոտդ ա, գնա քո համար ապրի, ինչի հետևից ես ընկել, մենք բան ու գործ չունե՞նք, որ ամեն մեկիդ գործով զբաղվենք, որ գալիս եք բողոքում եք, ինչ ա եղել որ»:

Ն., 34 տարեկան

ՄԲՃԿ մեկ այլ դեպքով հարցաքննության ժամանակ տուժողի վիճակն այնքան է վատացել, որ քննիչը ստիպված է եղել շտապօգնություն կանչել:

Տուժողները նշում են, որ բռնաբարության դեպքով հարցաքննության ժամանակ հաճախ հարցաքննության սենյակում լինում են նաև այլ անձինք, օրինակ՝ այլ քննիչ, կամ այդ քննիչի կողմից այլ գործով հարցաքննության իրավիրված անձ, ինչը կաշկանդում է բռնության ենթարկված անձին ներկայացնել գործի բոլոր մանրամասները: Հարցերը, որոնք հնչեցնում են քննիչները, հաճախ լինում են ոչ զգայուն, երբեմն ոչ պրոֆեսիոնալ, անձնական հետաքրքրությունից դրդված: Ամուսնացած կնոջ բռնաբարության գործը քննելիս քննիչը ճշտել է ամուսնուց, թե արդյո՞ք դեպքից հետո կնոջ և նրա միջև եղել են սեռական հարաբերություններ:

ՄԲՃԿ մեկ այլ դեպքով տուժողը նշում է, որ հարցաքննությունը տևել է սահմանվածից երկար, և քննիչի տված հարցերը եղել են ինտիմ և գործին չառնչվող, օրինակ՝ քննիչը հարցրել է տուժողին, թե արդյո՞ք նրան դուր եկավ բռնարարի հետ օրալ սեռական հարաբերություն ունենալը:

Հոգեբանական տրավմայի տեսանկյունից հատկապես ծանր է բռնության ենթարկված անձանց համար առերեսման գործընթացը բռնարարի հետ: Գիտակցելով, որ առերես հարցաքննությունն անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման կարևոր երաշխիքներից է, այնուամենայնիվ, կողմերի իրավունքների հավասարակշռման տեսանկյունից առաջադեմ իրավական փորձը սահմանում է դատաիրավական համակարգի պարտականությունը՝ չեզոքացնել տուժողին տրավմայի ենթարկող հարցերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ ՄԻԵԴ) Ս.Ն.-ն (S.N.-ն) ընդդեմ Շվեդիայի նախադեպային որոշմամբ (դատավճիռը՝ 2 հուլիս 2002 թ.) նշել է, որ սեռական բռնությանը վերաբերող քրեական գործերի առանձնահատկություններից մեկն այն է, որ նման դատավարությունները կարող են տուժողի համար ծանր փորձություն դառնալ հատկապես, երբ վերջինս, առանց իր ցանկության, առերեսվում է ամբաստանյալի հետ: Սա ավելի զգալի է դառնում անչափահասների դեպքում:

ՄԻԵԴ-ը գտել է, որ այսպիսի վարույթներում մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի երաշխավորման հարցը որոշելիս պետք է հաշվի առնել ենթադրյալ տուժողի անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը: Այսպիսով՝ ՄԻԵԴ-ը համարել է, որ սեռական բռնությանը վերաբերող վարույթներում գոհերին պաշտպանող որոշակի միջոցներ պետք է ձեռնարկվեն պայմանով, որ նման միջոցները հավասարակշռվեն պաշտպանական կողմի իրավունքների արդյունավետ իրացմամբ: Սույն գործով ՄԻԵԴ-ը համարել է, որ սեռական

բռնության ենթարկված անչափահաս զոհին դատարանում հարցաքննելու հնարավորության բացակայությունն այն դեպքում, երբ վերջինիս նախնական ցուցմունքները (որի ժամանակ գրավոր հարցադրումների իրավունք է ունեցել նաև պաշտպանական կողմի փաստաբանը) տեսաձայնագրված են և ներկայացվել են դատարանում, չի խախտում ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը³⁸:

Կ-ն ընդդեմ Սլովենիայի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է. քանզի ուղղակի առերեսումը կասկածյալի և նրա կողմից ենթադրաբար սեռական բռնության ենթարկված անձի միջև կարող է տուժողի հետագա տրավմատիզացիայի պատճառ դառնալ, կասկածյալի կողմից տուժողի անձնական առերես հարցաքննությունն այս դեպքում պետք է ազգային դատարանների կողմից ամենազգույշ գնահատականի արժանանա. որքան ավելի ինտիմ են հարցերը, այնքան այդ զգուշավորությունը մեծանում է (Y. v. Slovenia § 106):

Մինչդեռ ՍԲԾԿ շահառուներից շատերը նշում են, որ հատկապես նախաքննության փուլում առերեսումների ժամանակ իրենք գտնվում են հոգեպես ճնշված վիճակում, բռնարարի կամ նրա պաշտպանի տված նույնիսկ վիրավորական հարցերը չեն հանվում և չեզոքացվում քննիչների կողմից: Շահառուներից մեկը հիշում է.

Առերեսման ընթացքում քննիչն ու բռնարարը միասին ծխում ու զրուցում էին, ընդմիջման ժամանակ էլ քննարկում էին ավտոմեքենաների մասերի գները: Ամենազավեշտալին այն էր, որ նրանց քննարկմանը միացավ նաև իմ տղամարդ փաստաբանը: Ես ինձ ահավոր ճնշված էի զգում:

Ն., 34 տարեկան

Նույնանման հարցեր հնչեցվում են նաև դատական քննության փուլում, և դատարանը չի արձագանքում դրանց համաչափությանը: Է. Յ-ի նկատմամբ բռնաբարության փորձի գործով, որի մանրամասները վերջինս հետագայում հրապարակեց, տուժողը նշում է.³⁹

Դատական նիստի ընթացքում պաշտպանական կողմը հարցրեց. «Արդյոք Արմենի առնանդամը բավականին ամուր էր հեշտոց ներթափանցելու համար: Հակառակ դեպքում նա չէր կարող մեղադրվել բռնաբարության փորձի մեջ», -պնդում էին նրանք:

³⁸ Տե՛ս <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-60564>

³⁹ Տե՛ս <https://hetq.am/hy/article/105144>

Այսպիսով՝ կարևոր է.

- Վերապատրաստել ոստիկաններին, քննիչներին դատախազներին, դատավորներին և փաստաբաններին սեռական բռնության ենթարկված անձանց հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ սեռական բռնության դեպքերով քրեական գործերն առավել արդյունավետ քննելու համար:

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ և հատուկ կարգավորել սեռական բռնության դեպքերով քրեական գործերով նախաքննության և դատաքննության ընթացակարգերը՝ սահմանելով առանձնահատկություններ:

- Ուժեղացնել վերահսկման մեխանիզմները ոստիկանների և քննիչների կողմից էթիկայի կանոնների խախտումների համար սահմանված պատասխանատվության կիրառման նկատմամբ:

Անձնական կյանքի գաղտնիության իրավունքը և «բարոյականության» շահարկումը

Համաձայն միջազգային հեղինակավոր մի շարք հետազոտությունների՝ բռնաբարությունը դասվում է այն հանցագործությունների շարքին, որոնցով առավել քիչ են հաղորդումներ ներկայացվում իրավապահ մարմիններին⁴⁰: Սեռական բռնությունն ուսումնասիրող փորձագետները նշում են, որ դրա պատճառներից առավել նշանակալիցը սեռական բռնության ենթարկված կնոջ անձնական կյանքի գաղտնիության խախտումն է գործի քննության և դատավարության գործընթացների ժամանակ⁴¹:

Անձնական կյանքի գաղտնիության պահպանման իրավունք ունեն բոլորը, սակայն սեռական բռնության ենթարկվածների դեպքում սա ավելին է, քան պարզապես անհրաժեշտություն: Հաշվի առնելով սեռական բռնության առանձնահատկությունները՝ այս բռնությունից տուժած անձանց անձնական կյանքի գաղտնիության պաշտպանությունը պետության կողմից հանդիսանում է կարևոր երաշխիք, ինչը խթանում է ինչպես անձի վստահությունն իրավապահ համակարգի նկատմամբ, այնպես էլ բռնության ենթարկվածների շուտափույթ վերականգնումը:

⁴⁰ Sté u Dean G. Kilpatrick, National Violence against Women Prevention Research Center, Medical University of South Carolina. https://www.nsvrc.org/sites/default/files/publications_nsvrc_factsheet_media_packet_statistics-about-sexual-violence_0.pdf

⁴¹ Նույն տեղում:

Սա հատկապես կարևոր է Հայաստանի դեպքում հետևյալ պատճառներով .

- Անձնական կյանքի գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանությունը մարտահրավեր է՝ հաշվի առնելով փոքր համայնքներում մարդկանց հեշտ ճանաչելու և նույնականացնելու հնարավորությունը:

- Սեռական կյանքին և սեռականությանը վերաբերող թեմաները տաքու են հասարակության լայն շերտերի համար, իսկ կանանց, և առավել ևս աղջիկների սեռականության հետ կապված ցանկացած քննարկում շատ արագ տեղափոխվում է բարոյականության քննարկման ոլորտ:

Տուժողի անձնական կյանքի գաղտնիության ապահովման լրացուցիչ երաշխիքների տրամադրման միջազգային փորձը

ՀՀ կողմից վավերացված ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կատարումը վերահսկող կոմիտեն նշում է, որ կանանց արդարադատության մատչելիության կարևոր երաշխիքներից է դատախիզական համակարգի կողմից սեռական բնույթի հանցագործությունների քննության (ներառյալ՝ դատաքննության) ընթացքում անաչառության և արդարության ապահովումը՝ զերծ գենդերային կարծրատիպերից և նախապաշարմունքներից⁴²:

Տուժողի սեռական վարքագծի և սեռական հարաբերությունների անցյալի հետ կապված ապացույցների կիրառման անթույլատրելիությանն անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան: Համաձայն կոնվենցիայի⁴³ 54-րդ հոդվածի՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի քաղաքացիական կամ քրեական ցանկացած դատավարության շրջանակներում տուժողի սեռական վարքագծի և սեռական հարաբերությունների անցյալի հետ կապված ապացույցները թույլատրելի ճանաչվեն կամ գնահատվեն միայն այն դեպքերում, երբ դրանք վերաբերելի են գործին և անհրաժեշտ: Հայաստանը ստորագրել է այս կոնվենցիան և պատրաստվում է կոնվենցիայի վավերացման գործընթացին, ինչը ենթադրում է օրենսդրական փոփոխությունների իրականացում այս ոլորտում:

⁴² Տե՛ս Views of the Committee on the Elimination of Discrimination against Women under article 7, paragraph 3, of the Optional Protocol in respect of communication No. 18/2008 adopted on 16 July 2010, para. 8.9

⁴³ Տե՛ս <https://rm.coe.int/168046246d>

Եվրոպական շատ երկրներ վերանայել են սեռական բռնության դեպքերի քննության գործընթացը՝ համապատասխանեցնելով «գոհակենտրոն» մոտեցման սկզբունքներին: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը, որպես ընդհանուր կանոն, արգելում է ամբաստանյալից բացի որևէ այլ անձի սեռական կյանքի պատմությունը որպես ապացույց ներկայացնելը դատարանին: Այս կանոնից օրենքով ամրագրված են հստակ բացառություններ, որոնք նպատակ ունեն երաշխավորելու ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքի ապահովումը⁴⁴: Այս պրակտիկան ոչ միայն վերանայվել է եվրոպական երկրներում, այլ նաև ԱՄՆ-ում, Ավստրալիայում և Կանադայում, որտեղ օրինակ, գործում է Բռնաբարության քողարկման օրենսդրություն (Rape Shield Laws), որն արգելում կամ սահմանափակում է տուժողի նախկին սեռական հարաբերությունների պատմության օգտագործումը գործի քննության և դատավարության ժամանակ: Այս կարգավորումների նպատակն է պաշտպանել տուժողի անձնական կյանքի գաղտնիությունը և խուսափել այնպիսի ապացույցների ներկայացումից, որոնք կարող են դատավորի մոտ կանխակալ մոտեցում ձևավորել տուժողի նկատմամբ: Ապացույցների վերաբերյալ ԱՄՆ դաշնային օրենքը 1994 թ. փոփոխություններից հետո արգելում է տուժողի սեռական պատմության վերաբերյալ գործին չառնչվող ապացույցների ներկայացումը ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական գործերով:

Բռնաբարության քողարկման օրենսդրությունը բացառում է ցանկացած փաստարկի օգտագործում, այդ թվում՝

- տուժողի համբավի,
- տուժողի նախկին և ներկա սեռական հարաբերությունների վերաբերյալ տեղեկության

հավաքագրում⁴⁵:

Այս օրենսդրությունը նաև բացառում է նախկին զուգընկերների հարցաքննությունը, նրանց՝ տուժողի վերաբերյալ կարծիքի ուսումնասիրությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկությունը կարող է ազդել տվյալ սեռական բռնության դեպքի բացահայտման վրա⁴⁶:

Տուժողի սեռական պատմության ներկայացումը և քննարկումը սահմանափակելու հիմնական նպատակը տուժողների պաշտպանությունն է:

⁴⁴ Տե՛ս Rape Trials and Sexual History Evidence: Reforming the Law on Third-Party Evidence, Clare McGlynn Durham Law School, Durham University, Durham, UK, The Journal of Criminal Law 2017, Vol. 81(5), էջեր 367–392; <https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0022018317728824>

⁴⁵ Տե՛ս Handbook for Legislation on Violence against Women, The Division for the Advancement of Women in the Department of Economic and Social Affairs of the United Nations Secretariat//<https://www.un.org/womenwatch/daw/vaw/handbook/Handbook%20for%20legislation%20on%20violence%20against%20women.pdf>

⁴⁶ Տե՛ս <https://www.legalmatch.com/law-library/article/rape-shield-laws.html>

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տուժողի նախկին սեռական կյանքի պատմությունը հիմնականում առնչություն չի ունենում քննվող գործի հետ, և դրա **հիմնական նպատակը** տուժողի համբավի և նրա ցուցմունքների արժանահավատության վիճարկումն է՝ օգտագործելով հասարակությունում առկա կարծրատիպերը: Ավելին, տուժողի մոտ առկա վախը, որ նրա նախկին սեռական հարաբերությունները կարող են հանրայնացվել, կարող է ետ պահել նրան առհասարակ հաղորդումներկայացնելուց, ինչը հակասում է քրեական արդարադատության բուն նպատակին:

Իրավիճակը Հայաստանում

ՍԲԾԿ փորձը վկայում է, որ սեռական բռնության գործերով պաշտպանների կողմից կասկածյալների և մեղադրյալների պաշտպանությունը Հայաստանում մեծամասամբ կառուցվում է տուժողի անձնական կյանքի գաղտնիության երաշխիքի ոտնահարման և տուժողի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվության իրապարակման, բարոյականության նորմերի շահարկման, նախկին հարաբերությունների վերհանման շուրջ: Ինչպես վերևում նշված է, առաջադիմական շատ երկրներում այս արատավոր պրակտիկայի դեմ պայքարում է դատաիրավական համակարգը, որը զոհակենտրոն է և հիմնվում է տուժողների կարիքների վրա⁴⁷: Մինչդեռ Հայաստանում դատաիրավական համակարգը ոչ միայն չի արձագանքում դրան, այլև իր գործողություններով ամրապնդում է այն:

Նախաքննություն իրականացնող մարմինը հաճախ ձեռնամուխ է լինում տուժողի անձնական կյանքի այնպիսի մանրամասների բացահայտմանն, ինչպիսիք են մինչև հանցագործությունը տուժողի զուգընկերների (ընկեր, նշանած, ամուսին) թիվը, վերջիններիս հետ հարաբերությունների բնույթը, սեռական հարաբերությունների նախկին փորձը կամ փորձի բացակայությունը, որոնք տվյալ գործի քննության համար չեն ներկայացնում որևէ արժեք և չեն բացահայտում գործի հետ որևէ առնչություն ունեցող հանգամանք: Դեռ ավելին, այս տվյալները վարույթն իրականացնող մարմնի ներկայացուցիչների մոտ կարող են ձևավորել կանխակալ և կարծրատիպային վերաբերմունք տուժողի նկատմամբ և ետ են պահում տուժողներին հաղորդում ներկայացնելու կամ այն պնդելու ցանկությունից:

Գործի քննության ընթացքում կիրառվող պրակտիկա է նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից տուժողի նախկին զուգընկերներին հարցաքննելն, ինչի արդյունքում վերջիններս ոչ միայն պատմում են իրենց և տուժողի հարաբերությունների մասին, այլ նաև տեղեկանում են քննվող սեռական բռնության դեպքի մանրամասներին:

⁴⁷ Տե՛ս <https://law.lclark.edu/live/files/6471-confidentiality-and-sexual-violence-survivors-a>

Այսպիսով՝ ՀՀ-ում տուժողի սեռական կյանքի պատմության օգտագործումը ոչ միայն սահմանափակված չէ օրենսդրորեն և/կամ դատական պրակտիկայում, այլ նաև լայնորեն կիրառվող ու իրավաչափ պրակտիկա է:

Տուժողներն առնչվում են նաև գաղտնիության խախտման այլ խնդիրների, ինչպիսին է գործի մասին նույնականացման համար բավարար տվյալներ պարունակող տեղեկատվության արտահոսքը ՋԼՄ-ին, ինչի արդյունքում տուժողի անձնական պատմությունը դառնում է հանրային քննարկման և քննադատության առարկա: Սեռական բռնության դեպքերից մեկով, որի մասին տուժողը հրապարակային խոսեց հետագայում,⁴⁸ վերջինս նշում է, որ իր կողմից հաղորդում ներկայացնելուց մի քանի օր անց շատ հետևորդներ ունեցող էլեկտրոնային թերթերից մեկում հրապարակել է վերջինիս անունը, տարիքը, աշխատանքի և բնակության հասցեները՝ բոլոր անձնական տվյալներն ամենայն մանրամասնությամբ, ինչի հետևանքով իրեն սկսել են ճանաչել և անհանգստացնել:

Հատկանշական է նաև, որ չնայած անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության առկայությանը՝ դատական տեղեկատվական պաշտոնական համակարգի կայքում⁴⁹ դռնբաց դատական նիստերով քննված քրեական գործերով դատավճիռները հասանելի են հասարակության համար՝ առանց անձնական տվյալների գաղտնագրման, և դրանք կարդալով՝ կարելի է իմանալ ոչ միայն տուժողի անունը, ազգանունը, հասցեն և դեպքի մանրամասները, այլ կարելի է ծանոթանալ նաև վճռում արտացոլված այնպիսի ինտիմ մանրամասների, ինչպիսիք են տուժողի կուսաթաղանթի նկարագրությունը, նրա սեռական կյանքի պատմությունը և այլն: Այս ամենը կոպտորեն խախտում է տուժողի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը:

Առաջարկներ

ՍԲԾԿ-ն, ելնելով վերոգրյալ իրավիճակի նկարագրությունից և միջազգային փորձից, առաջարկում է.

- օրենսդրորեն սահմանափակել քրեական (չնայած ուսումնասիրության մեջ չի քննարկվել, սակայն տրամաբանական է, որ նաև քաղաքացիական) գործերով անձի սեռական կյանքի պատմության բացահայտումը, դրան ուղղված գործողությունները նախաքննության մարմինների կողմից և դրանց ներկայացումը դատաքննության ժամանակ որպես ապացույց,

⁴⁸ Տե՛ս <https://hetq.am/hy/article/105144>

⁴⁹ Տե՛ս www.datalex.am

- ներդնել հետաքննության, նախաքննության մարմինների և դատախազների կողմից

սեռական բռնության գործերի վարման ուղեցույցներում զոհակենտրոն և գենդերազգային մոտեցումները,

- իրականացնել ոստիկանների, քննիչների, դատախազների ու դատավորների շարունակական վերապատրաստումներ գենդերազգայնության բարձրացման, ինչպես նաև «զոհակենտրոն» մոտեցման կիրառման ուղղությամբ, որը նաև կբացառի տուժողի անձնական տվյալների հրապարակման և նախկին սեռական հարաբերությունների մասին տեղեկության հրապարակումը,

- դատական դեպարտամենտը պետք է վերանայի դատական տեղեկատվական պաշտոնական համակարգի կայքի շահագործման կանոնները՝ չհրապարակելով զոհերի անձնական և ընտանեկան գաղտնիք հանդիսացող տեղեկություն:

Կուսության ստուգման բացասական ազդեցությունը

Հին ժամանակների և միջնադարի պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ սեռական բռնությունն այդ ժամանակաշրջանում դիտվել է որպես սեփականության դեմ ուղղված հանցագործություն, մասնավորապես՝ պատվի «գողացում», ընդ որում պատիվը պատկանել է ոչ թե կնոջն, այլ նրա ընտանիքին: Բոլոր այն դեպքերում, երբ սեռական բռնությունը վկայակոչվել է կնոջ դիմադրությամբ, ընտանիքին տրվել է նաև դրամական փոխհատուցում, երբեմն խնդրի լուծում է եղել բռնարարի և բռնության ենթարկված անձի ամուսնությունը: Բռնաբարությամբ պայմանավորված կնոջ կուսության կորուստը նախատեսել է շատ ավելի խիստ պատիժ, քան, եթե բռնաբարությունն իրականացվել է նախկինում սեռապես ակտիվ կնոջ նկատմամբ: Սեռական բռնության դեպքից անմիջապես հետո կնոջը զննել է բժիշկը, որպեսզի փաստի, կնոջ՝ կուսությունից զրկվելը: Ըստ այդ եզրակացության՝ կառուցվել է հետագա դատական գործընթացը և պատժի նշանակումը: Նախորդ դարում կուսության ստուգումն ունեցել է կրոնական և բարոյական նշանակություն և կանխորոշել է բռնաբարված կնոջ հետագա ճակատագիրը⁵⁰:

Կուսության ստուգումը կամ կուսության թեստը գինեկուլոգիական հետազոտություն է, որի արդյունքում ուսումնասիրվում են կնոջ/աղջկա սեռական օրգանները և պարզում, թե արդյոք կինը կամ աղջիկն ունեցել են հեշտոցային հարաբերություններ ⁵¹:

⁵⁰ St u Susan Brownmiller. Against our will: men, women and rape, London: Secker & Warburg Harmondsworth: Penguin, 1976, էջ 22:

⁵¹ St u <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/275451/WHO-RHR-18.15-eng.pdf?ua=1>

Որոշ երկրներում այն իրականացվում է դատաբժիշկների կողմից սեռական բնույթի հանցագործությունները քննելիս ոստիկանության կամ այլ իրավապահ մարմինների ուղղորդմամբ, և ստացված արդյունքները կցվում են քրեական գործին: Այդ երկրների թվում են Հնդկաստանը, Պակիստանը, Բանգլադեշը, Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը, Ուկրաինան, Հայաստանը և այլն:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի N 87-Ն հրամանի, որը վերաբերում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դատաբժշկական փորձաքննությունների կազմակերպման չափորոշիչների 6-րդ կետին՝ կենդանի անձանց առաջնային փորձաքննություններն իրականացվում են, այդ թվում՝ պարզելու համար սեռական վիճակը՝ սեռական անձեռնմխելիությունը, կոնյս է, թե՞ ոչ⁵²: Սակայն սեռական անձեռնմխելիությունը կապված է ոչ թե կուսության, այլ տուժողի տարիքի հետ:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ մինչև 16 տարեկան անձինք օժտված են սեռական անձեռնմխելիությամբ՝ անկախ կույս լինելու հանգամանքից:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից 2018 թ. հոկտեմբերին արված հայտարարության⁵³ համաձայն՝ կուսություն ստուգելը, այդ թվում՝ բռնաբարության արդյունքում՝

- ✓ չունի գիտական հիմքեր,
- ✓ մարդու իրավունքների ոտնահարում է և գենդերային խտրականության դրսևորում,
- ✓ հաճախ կիրառվում է սեռական բռնության ենթարկված կանանց խոսքերի հավաստիությունը ստուգելու համար:

Համաձայն այդ նույն հայտարարության՝ ՄԱԿ-ի տարբեր գերատեսչություններ կոչ են անում պետություններին արգելել կուսության ստուգումը ցանկացած իրավիճակներում:

Ապացուցված է, որ կուսության թեստը չունի ո՛չ գիտական հիմքեր, ո՛չ էլ կլինիկական արդյունավետություն, մինչդեռ որոշ երկրներում իրավապահ մարմինների աշխատակիցները և բժիշկները շարունակում են կիրառել այն՝ պարզելու, թե արդյո՞ք տեղի է ունեցել բռնաբարություն, թե՞ ոչ:

⁵² Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=89056>

⁵³ Տե՛ս <https://www.who.int/reproductivehealth/virginity-testing-elimination/en/>

Այս տեսանկյունից բժշկական հետազոտությունը, ամենայն հավանականությամբ, կառաջացնի ֆիզիկական ցավ և հոգեբանական տառապանք, որն էլ կարող է հանգեցնել սեռական բռնության ենթարկված անձի երկրորդային զոհականացմանը⁵⁴: Այս անարդյունավետ թեստը նաև ոտնահարում է բժիշկների մի շարք էթիկական չափորոշիչներ, մասնավորապես՝ «մի վնասիր» սկզբունքը⁵⁵: Բացի այդ՝ որոշ դեպքերում սեռական բռնության ենթարկված անձն անգամ տեղեկացված չէ, որ բժիշկը պատրաստվում է ստուգել իր կուսությունը, և հետևաբար նաև չի հայտնում իր ինֆորմացված համաձայնությունը, ինչը կարող է համարվել սեռական բռնության ենթարկված անձի երկրորդային զոհականացման պատճառ⁵⁶:

Կուսության ստուգումը չի փաստում, թե արդյոք բռնաբարություն առհասարակ տեղի ունեցել է, թե ոչ, չի կանխատեսում, թե որքան տրավմատիկ են եղել բռնաբարության հետևանքներն անձի համար⁵⁷: Կուսաթաղանթի առկայությունը սեռական հարաբերության հավաստի ցուցիչ չէ, և առհասարակ գոյություն չունի որևէ հետազոտություն, որը կբացահայտի հեշտոցային հարաբերությունների հաճախականությունն ու վաղեմությունը⁵⁸: Ավելին, այս հետազոտության արդյունքները նաև ազդում են կնոջ՝ արդարադատության հասանելիության իրավունքի վրա՝ ստեղծելով կանխակալ վերաբերմունք իրավապահ համակարգի կողմից, բոլոր այն դեպքերում, երբ ապացուցվում է, որ չամուսնացած կինը կորցրել է իր կուսությունը նախքան այս միջադեպը⁵⁹:

ՍԲՃԿ-ի փորձը նաև ցույց է տալիս, որ բռնաբարության դեպքից ամիսներ անց անգամ իրականացվում է կուսաթաղանթի ամբողջականության ստուգում, քանզի կուսաթաղանթի ամբողջականության խախտման ժամկետ դեպքից մեկից երկու շաբաթ հետո հնարավոր չէ պարզել:

Միջազգային մի շարք կառույցներ ամրագրել են, որ որոշ բժշկական միջոցառումներ վնասակար են կանանց առողջության համար:

⁵⁴ Տե՛ս Shalhoub-Kevorkian N. Imposition of virginity testing: a life-saver or a license to kill? Soc Sci Med. 2005:

⁵⁵ Տե՛ս Behrens K. Why physicians ought not to perform virginity tests. Ethics. 2015; էջ 691–5:

⁵⁶ Տե՛ս Forced gynecological exams as sexual harassment and human rights violation. Kabul: Afghanistan Independent Human Rights Commission; 2002, <https://www.aihrc.org.af/media/files/Forced%20Gynecological%20Exams%20-Egnlish.pdf>

⁵⁷ Տե՛ս Joint general recommendation/general comment no. 31 of the Committee on the Elimination of Discrimination against Women/ general comment No. 18 of the Committee on the Rights of the Child on harmful practices: <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N14/627/78/PDF/N1462778.pdf?OpenElement>

⁵⁸ Տե՛ս Olson R, García-Moreno C. Virginity testing: a systematic review. Reprod Health. 2017; 14(1):61. doi:10.1186/s12978-017-0319-0:

⁵⁹ Տե՛ս Amnesty International. It's in our hands. Stop violence against women. London: Amnesty International Publications; 2004:

Կուսության թեստը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի շարք կառույցների կողմից ճանաչվել է որպես վնասակար պրակտիկա⁶⁰:

Սեռական բռնության ենթարկված անձանց առավել զոհակենտրոն ծառայություններ մատուցելու համար որոշ երկրներ մշակել են դատաբժշկական ծառայությունների մատուցման չափորոշիչներ, որոնք առավել անվնաս կլինեն սեռական բռնության ենթարկված անձանց համար⁶¹: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության չափորոշիչների՝ դատաբժշկական ծառայությունները սեռական բռնության ենթարկված անձանց պետք է մատուցվեն՝ հարգելով սեռական բռնության ենթարկված անձի արժանապատվությունը⁶²:

Օրինակ՝ ԱՄՆ-ում ներդրվեց «բռնաբարության ապացուցման արկղը», որը հանդիսանում է առաջնային ապացույցների հիմք հետաքննության համար: Այս ապացույցների առկայության դեպքում, անձանոթի կողմից բռնաբարության կամ դրա փորձի բացահայտման հավանականությունը բարձրանում է մոտ 24 անգամ, ծանոթի կողմից իրականացրած բռնաբարության դեպքերով էլ այն տալիս է մի կարևոր հնարավորություն՝ պահպանելու փաստերը⁶³: «Բռնաբարության ապացուցման արկղի» կարևոր առանձնահատկությունն այն է, որ, եթե սեռական բռնություն վերապրած անձը չի ցանկանում հայտնել հանցագործության մասին տվյալ պահին, ապացույցները պահպանվում են «արկղում» և հետագայում, եթե անձը փոխում է իր որոշումն ու ցանկանում քրեական գործ հարուցել կատարված դեպքով, նա ունենում է որոշակի ապացույցների բազա⁶⁴:

Շատ կարևոր մեխանիզմ է նաև ԴՆԹ թեստի պարտադիր ներդրումը բռնաբարության դեպքերի բացահայտման գործընթացում: Ամերիկյան փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մինչև ԴՆԹ թեստի պարտադիր լինելը շատ անձինք մեղադրվել են բռնաբարության համար առանց իրական ապացույցների: Եթե կան հանցագործության մասին վկայող ապացույցներ (արյուն, սերմնահեղուկ, թուք, մազ և այլն), ապա միայն դրանց ԴՆԹ-ի ստուգման միջոցով է հնարավոր որևէ անձի մեղադրանք առաջադրել բռնաբարության համար⁶⁵:

⁶⁰ Տե՛ս ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոմիտեն, ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն, Կանանց դեմ բռնության ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն անդրադարձել են կուսության թեստին և նշել, որ այն վնասակար փորձ է կանանց համար:

⁶¹ Ամբողջական ցանկը՝ <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/42788/924154628X.pdf?sequence=1>

⁶² Նույն տեղում:

⁶³ Տե՛ս Sommers, Ira; Baskin, Deborah (2011). "The Influence of Forensic Evidence on the Case Outcomes of Rape Incidents". The Justice System Journal. 32(3): 328:

⁶⁴ Տե՛ս <https://www.rainn.org/articles/rape-kit>

⁶⁵ Տե՛ս <https://www.rainn.org/articles/importance-dna-sexual-assault-cases>

Այսպիսով՝ ՀՀ նախաքննական մարմինը սեռական բռնության դեպքերը քննելիս ընդունում է որպես փաստ դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, որը ոչ միայն չպետք է ունենա որևէ նշանակություն ապացուցման տեսանկյունից կոնկրետ հանգամանքների կապակցությամբ, այլ նաև շատ հաճախ երկրորդային զոհականացման է ենթարկում սեռական բռնության ենթարկված կանանց և աղջիկներին: Շատ դեպքերում քրեական գործերի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ անգամ ծննդաբերած կանանց դեպքում դատաբժշկական փորձաքննությունները պարունակում են կնոջ կուսության ստուգման վերաբերյալ տեղեկություններ: ՄԲԾԿ-ում վարած բոլոր դեպքերով հարուցված քրեական գործերում եղել է կնոջ/աղջկա կուսաթաղանթի, հեշտոցի, սեռական շուրթերի, սեռական օրգանների շրջանում առկա մազածածկի մանրամասն նկարագրություն, որը տրամադրվել է նաև մեղադրյալին, քննիչին, դատախազին, դատավորին ու պաշտպաններին, որը խիստ անձանական տեղեկատվություն է՝ արժանապատվություն ոտնահարող հատկանիշներ պարունակող երևույթ:

Հաշվի առնելով վերոնշյալ փորձը, ինչպես նաև միջազգային առաջատար պրակտիկան՝ կարևորվում է կուսության ստուգման թեստի արգելումը կամ կիրառման սահմանափակումն այն գործերով, երբ դրա խիստ անհրաժեշտությունը գործի ելքի համար հիմնավորված է քննիչի կողմից: Կարևորվում է նաև գործի քննության համար ԴՆԹ թեստի պարտադիր կիրառումը սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ քննելիս: Որպես ոլորտի կարևոր բարեփոխում պետք է քննարկել նաև բռնաբարության ապացուցման արկղի ներդրումը, որը կանանց արդարադատության հասանելիության կարևոր երաշխիք է:

Մաս II

Սեռական բռնության օրենսդրական
կարգավորումները և տեսակները,
սեռական հարաբերության համաձայնությունը

Սեռական հարաբերության համաձայնության վերաբերյալ միջազգային իրավական փորձը

Միջազգային առաջադեմ փորձը և իրավական զարգացումները վկայում են, որ սեռական հանցագործությունների բացահայտման արդյունավետության վրա մեծապես ազդում է քրեական օրենսդրությամբ սահմանվող սեռական հարաբերության «համաձայնության» կամ «կամքի» եզրույթների մեկնաբանությունը:

Պատմականորեն տուժողի «համաձայնության» առկայությանը բռնաբարության որակման համար մեծ ուշադրություն չի դարձվել, և բռնաբարության հիմնական հատկանիշը համարվել է բռնությունը, որը հանցագործության սուբյեկտը կիրառել է տուժողի դիմադրությունը հաղթահարելու համար: Այսինքն՝ տուժողի անհամաձայնության արտահայտության դրսևորման միակ ընդունելի տարբերակը երկար ժամանակ համարվել է ֆիզիկական դիմադրությունը, որի ապացույցները տեսանելի են բռնության հետքերով:

Սակայն ժամանակակից գիտական բացահայտումների, սեռական բռնության ենթարկված անձանց վարքի լայնամասշտաբ ուսումնասիրությունների, տրավմայի և դրա դրսևորման առանձնահատկությունների հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ ֆիզիկական դիմադրությունն անհամաձայնության արտահայտման միակ և նույնիսկ ամենատարածված ձևը չէ⁶⁶:

Մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում սեռական բռնության ենթարկված անձանց ֆիզիկական անձեռնմխելիության և հոգեկան ամբողջականության պաշտպանության համար հատկապես կարևոր է դառնում հաշվի առնել անձի կողմից իր համաձայնության ու անհամաձայնության արտահայտման բոլոր հնարավոր դրսևորումները: Դեռ ավելին, միջազգային իրավունքը բռնաբարությունը համարում է անմարդկային վերաբերմունքի տեսակ,⁶⁷ որից պաշտպանված լինելը մարդու բացարձակ իրավունքն է և պետության հիմնական պարտավորություններից մեկը:

Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի՝ 2002 թ-ին հրապարակած Նախադեպային իրավունքի ժողովածուում նշված է, որ «բռնություն, հարկադրանք, սպառնալիք և հանկարծակիություն» բառերը պետք է լայն մեկնաբանություն ստանան: Օրինակ՝ դեռևս 1973 թ.-ին կայացրած վճռով Ֆրանսիայի վճռաբեկ դատարանը գտել է, որ միայն այն փաստը, որ տուժողը խնդրել է բռնարարին դադարեցնել սեռական գործողությունները՝ առանց հետագա դիմադրություն ցուցաբերելու այն դեպքում, երբ ինքն էր դրանից առաջ համաձայնել նստել նրա մեքենան և համբուրվել նրա հետ, բավարար է բռնաբարության փաստը հաստատելու համար⁶⁸:

⁶⁶ Ավելի մանրամասն տե՛ս, օրինակ՝ <https://obgyn.onlinelibrary.wiley.com/doi/full/10.1111/aogs.13174>

⁶⁷ Մանրամասն տե՛ս Pauline Muzonzo Paku Kisoki v. Sweden, Communication No. 41/1996, 8 May 1996, UN Doc. CAT/C/16/D/41/1996 (1996), Aydin v. Turkey, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-58371>

⁶⁸ Տե՛ս Cass. crim., 10 juillet 1973, Bull. crim. no 322 ; Revue de science criminelle, 1974, էջ. 594

ՄԻԵԴ-ը 2003 թ.-ին Մ. Ս ընդդեմ Բուլղարիայի (M.C vs Bulgaria)⁶⁹ գործով կայացրած իր նախադեպային որոշմամբ արձանագրել է, որ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի երկրների, ինչպես նաև միջազգային այլ իրավական համակարգերի ժամանակակից զարգացումները՝ Կոնվենցիայի անդամ պետությունների պոզիտիվ պարտավորությունն է **ցանկացած սեռական բնույթի գործողության քրեականացումն ու արդյունավետ քննությունը**, որը տեղի է ունեցել առանց **համաձայնության**, ներառյալ նաև այն դեպքերը, երբ չկա տուժողի ֆիզիկական դիմադրությունը: Այս պահանջը պետությունը պարտավոր է իրականացնել՝ պաշտպանելու համար ՄԻԵԿ 3-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված մարդու խոշտանգումներից և այլ անմարդկային ու նվաստացուցիչ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, ինչպես նաև անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Վերոնշյալ գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև, որ չնայած երբեմն գործնականում դժվար է ապացուցել համաձայնության բացակայությունը բռնաբարության այնպիսի «ուղղակի» ապացույցների բացակայության պարագայում, ինչպիսիք են բռնության հետքերն ու վկաները, սակայն իշխանություններն, այնուամենայնիվ, պետք է ուսումնասիրեն բոլոր փաստերը և որոշում կայացնեն՝ բոլոր առկա հանգամանքները գնահատելով: **Նախաքննությունն ու դրա եզրակացությունները պետք է կառուցվեն համաձայնության բացակայության խնդրի շուրջ**⁷⁰:

Նմանատիպ մոտեցում է որդեգրել նաև Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան⁷¹, որը ստորագրվել է 33 կողմից 2018 թ.:

ԿՆԽԲՁՎ /ՄԻԴՈ/ կոմիտեն Քերըն Թայագ Վերտիդոն ընդդեմ Ֆիլիպինների գործով⁷², հիմնվելով միջազգային դատարանների կողմից սահմանված չափորոշիչների վրա, առաջարկել է պետություններին բռնաբարության սահմանումից հանել բռնության չափանիշը և դրա փոխարեն ընդունել բռնաբարության այնպիսի սահմանում, որը.

- պահանջում է «միանշանակ և կամավոր համաձայնություն» և մեղադրյալի կողմից կատարված քայլերի հիմնավորում՝ համոզվելու համար, որ տուժողը համաձայն է, կամ
- պահանջում է, որ արարքը տեղի ունենա հարկադրական հանգամանքների ներքո և ներառում է հարկադրական հանգամանքների լայն ցանկ:

⁶⁹ Մ. Ս ընդդեմ Բուլղարիայի, M.C vs Bulgaria, էջ 153 հասանելի է անգլերենով <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61521>

⁷⁰ Մ. Ս ընդդեմ Բուլղարիայի, M.C vs Bulgaria, էջ 181, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-61521>

⁷¹ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 36, հասանելի է հայերենով <https://rm.coe.int/168046246d>

⁷² Տե՛ս http://www.worldcourts.com/cedaw/eng/decisions/2010.07.16_Tayag_Vertido_v_Philippines.pdf

Այս մոտեցմանը համահունչ, օրինակ, Մեծ Բրիտանիայի «Սեռական հանցագործությունների ասիլ» ակտը⁷³ սահմանում է, որ սեռական բնույթի բռնի գործողության հանցակազմի համար պարտադիր պայման է, որ այն՝

- կատարված լինի դիտավորությամբ,
- տուժողը համաձայնած չլինի սեռական հարաբերությանը,
- հանցագործության սուբյեկտը (բռնարարը) չունենա ողջամիտ համոզմունք, որ

տուժողի համաձայնությունն առկա է:

Համոզմունքի ողջամտությունը գնահատվում է՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ նաև այն քայլերը, որոնք հանցագործության սուբյեկտը կատարել է համոզվելու համար, որ տուժած անձը համաձայն է:

Նույնանման օրենսդրական կարգավորումներ ունեն նաև Բելգիան, Նորվեգիան, Դանիան, իսկ համաձայնության լայն մեկնաբանման վերաբերյալ մոտեցումները կիսում են ԱՄՆ, Կանադայի և մի շարք այլ երկրների դատարանները:

ՀՀ օրենսդրությունը և դատարանի դիրքորոշումները

ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բռնաբարությունը տղամարդու սեռական հարաբերությունն է կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ՝ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմը ներառում է սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները տուժողի կամքին հակառակ՝ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դրա գործադրելու սպառնալիքով կամ նրա անօգնական վիճակն օգտագործելով:

Երկու դեպքում էլ արարքը բնութագրվում է սեռական հարաբերությամբ տուժողի հետ.

- նրա կամքին հակառակ,
- վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դրա գործադրելու սպառնալիքով կամ
- տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:

⁷³ Մեծ Բրիտանիայի «Սեռական հանցագործությունների մասին» ակտ, մաս 1, հասանելի է անգլերենով https://www.legislation.gov.uk/ukpga/2003/42/pdfs/ukpga_20030042_en.pdf

Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է հարկադրական հանգամանքների սահմանափակ շրջանակ՝ բռնության գործադրում կամ այն գործադրելու սպառնալիք և անօգնական վիճակ: Մինևույն ժամանակ «կամքին հակառակ» արտահայտությունը լիովին չի արտահայտում «միանշանակ և կամավոր համաձայնության» կոնցեպտը, ինչն ակնհայտ է դառնում ներքևում ներկայացվող օրինակով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, որպես օրենքի միատեսակ կիրառումն ապահովող բարձրագույն դատարան, չունի որևէ հրապարակված որոշում, որով կմեկնաբաներ ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ կամ 139-րդ հոդվածներով նախատեսված «կամքին հակառակ» եզրույթը և դրա կապը հանցագործության այլ հատկանիշների հետ: Մինևույն ժամանակ «կամքի» և «համաձայնության» հասկացությունները կենտրոնական են այս հանցագործությունների ճիշտ ընկալման համար:

Պատահական չէ, որ 24.10.2017 թ. հրապարակված ՀՀ քրեական օրենսգրքի նախագծով⁷⁴ սեռական բնույթի բռնի գործողությունների հոդվածում կամքին հակառակ եզրույթը առաջարկվել է լրացնել «կամ նրա կամքն անտեսելով» արտահայտությամբ:

Չնայած ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի և ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝ համաձայն որոնց արդարադատություն իրականացնելիս հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, այնուամենայնիվ, ՀՀ դատարանները միշտ չէ, որ առաջնորդվում են մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների՝ ներառյալ ՄԻԵԴ-ի դիրքորոշումներով:

«Կամքին հակառակ» եզրույթի նեղ և ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական պայմանագրերին ու դրանց հիման վրա գործող մարմինների դիրքորոշմանը չհամապատասխանող մեկնաբանման վառ օրինակ է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից թիվ ԱՎԴ2/0055/01/17 քրեական գործով կայացված⁷⁵ որոշման մեջ բերված իրավական հիմնավորումները: Մասնավորապես, օրինական ուժի մեջ մտած որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը նշել է, «բռնաբարության հանցակազմն առկա է միայն այն դեպքում, երբ նախքան բռնության գործադրումը այդ ընթացքում կնոջ կողմից դրսևորած համապատասխան վարքագիծը վկայում է հանցավորի հետ սեռական հարաբերություն ունենալու ցանկության բացակայության մասին և գործադրվող բռնությունը պետք է հանդիսանա անհրաժեշտ միջոց կնոջ առկա կամ սպասվելիք դիմադրությունը հաղթահարելու համար:

⁷⁴ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/496/about>

⁷⁵ Տե՛ս https://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072741005161
Հասանելի էր առ 01.08.2019թ.: Ներկայումս ինֆորմացիան սահմանափակված է:

Տվյալ հանցակազմի համար բնութագրական է, որ հանցավորի կողմից բռնության գործադրումը տուժողի հետ սեռական հարաբերության մեջ մտնելու կոնկրետ նպատակ է հետապնդում»: Վերոնշյալ գործի փաստական հանգամանքները հետևյալն էին.

✓ Նախկին ամուսինն իր ընկերների հետ միասին, զենքի սպառնալիքով ավտոմեքենայի բեռնախցիկում փակելով, առևանգել է իր նախկին կնոջը, տարել է հյուրանոց, որտեղ սեռական հարաբերություն է ունեցել վերջինիս հետ:

✓ Առավոտյան կինը կարողացել է փախչել և առևանգման մասին հաղորդում տվել ոստիկանությունում: Հետագա ցուցմունքներում նշել էր նաև բռնաբարության մասին:

✓ Դատարանը մեղավոր է ճանաչել ամբաստանյալին ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ , 3-րդ կետերով նախատեսված հանցագործության (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ մարդու առևանգում) կատարման համար և դատապարտել է ազատազրկման, սակայն բռնաբարության հանցակազմ նրա արարքներում չի գտել և ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասի հանցագործության մասով նրան արդարացրել է հետևյալ իրավական հիմնավորմամբ.

Տուժող Շ-ն իր ցուցմունքներում նշել է, որ մինչև սեռական հարաբերություն ունենալը Վ-ն իրեն չի հարվածել, այդ ընթացքում որևէ վնասվածք չի պատճառել, որևէ սպառնալիք չի տվել և իր հագուստները չի պատռել՝ վախենալով, որ Վ-ն ուժով կհանի շապիկը՝ ինքն է այն հանել ու պառկել նրա հետ նույն անկողնում՝ նրան հայտնելով, որ դեռևս պատրաստ չէ նրա հետ հարաբերություն ունենալ:

Առաջին ատյանի դատարանը, վերոգրյալների հիման վրա եկել է այն տրամաբանական եզրակացության, որ տուժողի ցուցմունքում առկա վերոնշյալ փաստական տվյալներն իրենց համակցության մեջ նույնպես վկայում են, որ մինչև սեռական հարաբերություն ունենալը ամբաստանյալ Վ-ի կողմից տուժողի դիմադրությունը հաղթահարելու նպատակով չեն կատարվել այնպիսի գործողություններ, որոնք կարող էին դիտարկվել որպես բռնության գործադրմամբ կատարված, քանի որ, մինչև սեռական հարաբերություն ունենալը տուժող Շ-ի դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ Վ-ի հետ նույն անկողնում միասին պառկելուն համաձայնվելը, հագին եղած շապիկը կամովին հանելը ամենևին էլ չեն վկայում Վ-ի հետ սեռական հարաբերություն ունենալու ցանկության բացակայության մասին:

Քաղվածք ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատավճռից

Վերը նշված օրինակում դատարանի համար տուժողի ցուցմունքի անարժանահավատության հիմք են հանդիսացել այն հանգամանքները, որ տուժողը չի հայտնել բռնաբարության մասին հյուրանոցի աշխատողներին և հետագայում ոստիկանության բաժնում առևանգման վերաբերյալ հաղորդում ներկայացնելիս:

Ծանոթ չլինելով գործի այլ հանգամանքներին և մանրամասներին՝ այնուամենայնիվ, դատարանի մեկնաբանություններից ակներև է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը տրամաբանական է համարել, որ զենքի սպառնալիքի ներքո առևանգված կինը, որը տարիներ շարունակ խուսափում և փախչում է նախկին ամուսնուց, իր կամքին հակառակ նրա հետ գտնվելով հյուրանոցում, սեփական կամքով սեռական հարաբերություններ է ունեցել վերջինիս հետ: Հետևաբար, առևանգված վիճակում գտնվելը նախկին ամուսնու կողմից և նրա հետ փակ տարածքում գտնվելը չի գնահատվել և նույնիսկ չի քննարկվել դատարանի կողմից որպես հարկադրական հանգամանք, ինչը կարող է ազդել կնոջ համաձայնության կամ կամքի ազատ արտահայտման վրա: Միևնույն ժամանակ կամահայտնությունը հաստատելու համար դատարանը բավարար է համարել «նույն անկողնում պառկելը»:

Կամքի ու համաձայնության մասին հասարակության պատկերացումներն ամբողջանում են նաև գործով որպես ապացույց ճանաչված հետևյալ ցուցմունքով.

Ն.Ս. (մատուցողը) միաժամանակ տեղեկացրել է, որ «... առավոտյան սուրճ է տարել նրանց սենյակ, տեսել է Շ-ին և նա բռնաբարվածի տպավորություն չի թողել»:

Քաղվածք ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատավճռից

Նույնանման մոտեցումներ և պատկերացումներ առկա են նաև ՍԲԾԿ շահառուների մասնակցությամբ գրեթե բոլոր գործերում:

Դիտարկումները վկայում են, որ «համաձայնության» կամ «կամքի» եզրույթների մասով ՀՀ-ում առկա է ն՝ օրենսդրական կարգավորման, ն՝ իրավական ընկալման, ն՝ հասարակության իրավագիտակցության ու իրազեկման բարձրացման խնդիր:

Ուստի առաջարկվում է.

1. ՀՀ քրեական օրենսգրքում իրավական որոշակիության սկզբունքի պահպանմամբ քրեական պատասխանատվություն նախատեսել առանց տուժողի համաձայնության կատարված բոլոր սեռական բնույթի գործողությունների համար՝ անկախ բռնության կիրառման և դիմադրության հանգամանքից⁷⁶,

2. Սեռական կրթության ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև սոցիալական գովազդների ու հեռուստածրագրերի միջոցով իրազեկել հասարակությանը սեռական հարաբերություններում «համաձայնություն» ստանալու և դիմացիկին հարգելու անհրաժեշտության մասին՝ հստակ սովորեցնելով, որ առանց համաձայնության սեռական հարաբերությունը հանցագործություն է:

3. Իրականացնել հատուկ խորացված և պարտադիր վերապատրաստումներ դատաիրավական համակարգի այն ներկայացուցիչների համար, որոնք վարում են սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործեր:

«Սեռական հարաբերության համաձայնության» եզրույթի սահմանումը հոգեբանական տեսանկյունից և դրսևորման հիմնական առանձնահատկությունները

Աշխարհի տարբեր երկրներում և տարբեր իրավիճակներում «համաձայնության» եզրույթը տարբեր կերպ է բացատրվում, ինչն էլ եզրույթը դարձնում է բավական դժվար ըմբռնելի և հաճախ դիտվում է միայն որպես իրավաբանական եզրույթ: Մինևույն ժամանակ հարկավոր է ընդգծել, որ համաձայնության եզրույթը հասկանալու համար իրավաբանական կրթություն ունենալն ամենևին էլ պարտադիր չէ: Հասարակական ընկալումները փոխելու գործընթացում առաջնային նշանակություն ունի կրթությունը:

Համաձայնության ճիշտ ընկալման համար ԱՄՆ որոշ նահանգների համալսարաններում ուսանողներին սովորեցնում և ներքին կանոնակարգերով սահմանում են գիտակցված համաձայնություն ստանալու անհրաժեշտությունը:

Ի՞նչպես կարելի է սահմանել համաձայնությունն առհասարակ.

Համաձայնությունը զուգընկերների միջև գիտակցված պայմանավորվածություն է սեռական ակտիվության մեջ կամավոր ներգրավվելու համար:

⁷⁶ Քանի որ համաձայնության ամբողջական ընկալումը կարող է ժամանակ պահանջել ինչպես հասարակության, այնպես էլ իրավապահ համակարգի համար, առաջարկվում է օրենսդրական փոփոխություններն ընդունել՝ սահմանելով, որ դրանք ուժի մեջ կմտնեն 1 կամ 2 տարի հետո, իսկ այդ տարիներն օգտագործել լայնածավալ կրթական միջոցառումներ իրականացնելու համար:

Կարևոր է իմանալ.

- ✓ Մի անգամ սեռական ակտիվության համաձայնություն տալը, դեռ չի նշանակում, որ զուգընկերը տվել է սեռական հարաբերության համաձայնություն: Օրինակ, համբուրվելու համաձայնությունը թույլ չի տալիս զգեստը հանել կամ նախկինում սեռական հարաբերություն ունենալը դեռ չի նշանակում ապագայում և սեռական հարաբերություն ունենալու համաձայնություն:
- ✓ Զուգընկերը կարող է չեղարկել համաձայնությունը ցանկացած պահի, եթե անհարմարություն է զգում:
- ✓ Ստիպողական համաձայնությունը դեռ չի նշանակում, որ զուգընկերը ստացել է համաձայնություն, օրինակ՝ սպառնալով, որ կվնասի զուգընկերոջը, ինչից դրդված՝ մյուս զուգընկերը համաձայնել է սեռական հարաբերություն ունենալ:
- ✓ Առանց համաձայնության սեռական հարաբերությունը ստիպողական սեռական հարաբերություն է:
- ✓ Լռությունը համաձայնություն չի կարող դիտարկվել⁷⁷:

Կան մարդիկ, որոնք չեն կարող համաձայնություն տալ սեռական ակտիվության համար՝ ելնելով հուզական վիճակից, սահմանափակ կարողություններից, ակոհուլի, թմրանյութերի կամ այլ նյութերի ազդեցության տակ գտնվելուց, տարիքային առանձնահատկություններից և այլն: Նման դեպքերում քննարկման առարկա պետք է հանդիսանա այդ անձանց հետ սեռական հարաբերություն ունենալը վերջիններիս անօգնական վիճակն օգտագործելով:

Հաճախ կարելի է լսել պատմություններ, երբ բռնության ենթարկված անձը համաձայնություն տվել է վախից ելնելով, կամ գտնվել է հստակ սպառնալիքի ազդեցության տակ. սրանք համաձայնություն չեն կարող դիտարկվել: Պարտադիր չէ, որ համաձայնությունը լինի վերբալ/խոսքային, կարևորը կամարտահայտությունն է այն դեպքում, երբ կամքի վրա որևէ ազդեցություն չի եղել: ***Համաձայնություն պիտի լինի յուրաքանչյուր սեռական ակտիվության պարագայում⁷⁸:***

Ինչպե՞ս է դրսևորվում համաձայնություն տալու գործընթացը.

Առողջ հարաբերություններ կառուցելու համար կարևոր է խոսել զուգընկերոջ հետ անձնային սահմաններից և քննարկել սեռական ակտիվության հնարավոր սահմանները կամ ցանկություններն ու արգելքները:

⁷⁷ St u RAINN. (n.d.). Retrieved from Rainn web site: <https://www.rainn.org/articles/what-is-consent>

⁷⁸ St u Kinsey confidential. (n.d.). Retrieved from Kinsey confidential Web site: <https://kinseyconfidential.org>

Օրինակ՝ համաձայնություն ստանալու գործընթաց կարելի է դիտարկել զուգընկերոջ հետ քննարկումը, արդյոք իրեն դուր է գալիս այս կամ այն սեռական ակտիվության տեսակը, արդյոք ինքը լավ է զգում այս պահին⁷⁹: Հաճախ համաձայնություն չտալը կարող է դրսևորվել ոչ թե բառով, այլ մարմնի լեզվի միջոցով, պասիվության կամ ակնհայտ ցանկություն չդրսևորելով մասնակից լինելու այս կամ այն սեռական ակտիվությանը: Ուստի, հարկավոր է ուշադիր լինել և հարգել ինչպես ինքդ քո, այնպես էլ դիմացինի սահմաններն ու կարևորել համաձայնությունը յուրաքանչյուր սեռական ակտիվության ժամանակ⁸⁰:

ՄԲԾԿ-ի դիտարկումների և դեպքերի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Հայաստանում սեռական բռնության դիտանկյունից համաձայնության հասկացման և ընդունման դժվարությունները կապված են դեռևս տարածված այն մոտեցման հետ, որ սեռական բնույթի գործողության կամ հարաբերության համաձայնության ստացումը հենվում է սեռական հարաբերությունների ավանդական սցենարի վրա, ըստ որի մի զուգընկերը, պայմանավորված մշակութային առանձնահատկություններով, սեռական հարաբերության նախաձեռնողն է, ինչին մյուս զուգընկերը կամ պատասխանում է համաձայնությամբ կամ դիմադրում է: Այս մոտեցումը, սակայն, անարդյունավետ է և չի պատասխանում համաձայնության եզրույթի հետ կապված մի շարք հիմնախնդիրներին: Այդ տեսանկյունից առավել ընդգրկուն է հաղորդակցման սցենարը, որը հնարավորություն է տալիս դիտարկելու երկու զուգընկերներին «ակտիվ և նախաձեռնող» տեսանկյունից, ինչպես նաև դիտարկելու համաձայնությունը՝ դիմադրության առկայությունից անկախ⁸¹:

Սեռական բռնության տեսակների ոչ լիարժեք արտացոլումը ՀՀ օրենսդրության մեջ

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է քրեական պատասխանատվություն սեռական բռնության հետևյալ դրսևորումների համար.

- **Բռնաբարություն.** տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 138):

⁷⁹ Տե՛ս SAPAC. (n.d.). Retrieved from SAPAC Web site: <https://sapac.umich.edu/article/49>

⁸⁰ Տե՛ս Sexual Trauma Services. (n.d.). Retrieved from Sexual Trauma Services Web Site: <https://www.stsm.org>

⁸¹ Տե՛ս Mauck, S.E. (2016). Perceiving Sexual consent: The Effects of Gender and Alcohol Use on Perceptions of Sexual Consent. University of Tennessee.

- **Սեքսուալ բնույթի բռնի գործողություններ.** Որպես այդպիսիք համարվում են սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները տուժողի կամքին հակառակ՝ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 139):

- **Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելը՝** շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 140):

- **Տասնութ տարին լրացած անձի կողմից սեռական հարաբերությունը ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ** (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 141):

- **Անառակաբարո գործողություններ.** տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ կամ տասնվեց տարին լրացած անձի կողմից տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 142):

Սեռական բռնության հատուկ դրսևորման՝ սեռական շահագործման կամ դրա հետ փոխկապակցված արարքների համար պատասխանատվություն նախատեսող արարքները հետևյալն են՝

- **Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը՝ ներառյալ սեքսուալ շահագործման ձևերը** (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 132):

- **Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը** (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 132.2):

- **Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը** (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 132.3):

- **Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը** (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 166):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված է նաև վարչական պատասխանատվություն 18 տարին չլրացած անձանց պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և տեսաերիզներ վաճառելու կամ դրանց վաճառքի մեջ ներգրավելու համար:

Մինչդեռ կան սեռական բռնության տեսակներ, որոնք, իրենց առանձնահատկություններից ելնելով ունեն հատուկ կարգավորումների կարիք, սակայն արտացոլում չեն գտել մեր օրենսդրության մեջ:

Ամուսնական բռնաբարություն

Բռնաբարության սահմանումը ՀՀ օրենսդրությամբ ամբողջությամբ ներառում է նաև ամուսնական բռնաբարությունը, սակայն ամուսնու կողմից բռնաբարությունը թե՛ իրավապահ մարմինների, թե՛ բռնության ենթարկված անձանց ու թե՛ հասարակության կողմից հաճախ ընկալվում է ոչ թե որպես բռնաբարություն, այլ որպես «ամուսնական պարտականության» մի մաս: Այս ընկալումը մեծապես փոխկապակցված է համաձայնության ընկալման հետ, որի մասին ավելի մանրամասն արդեն ներկայացվել է: Այս ընկալումների փոփոխման համար անհրաժեշտ է իրականացնել լայնամասշտաբ կրթական ծրագրեր հասարակության և իրավապահ համակարգի ներկայացուցիչների հետ:

Իրազեկման գործառույթների իրականացումից զատ՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային մարմիններն առաջարկում են նաև օրենսդրական առանձնահատուկ կարգավորումներ: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեն առաջարկում է որպես առանձին հանցագործության տեսակ քրեական պատասխանատվություն սահմանել ամուսնական բռնաբարության համար: Նման առաջարկ Կոմիտեն ներկայացրել է նաև ՀՀ-ին Կոնվենցիայի վերաբերյալ պարբերական 5-րդ և 6-րդ համակցված զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում⁸²: Են Ստամբուլի կոնվենցիայի պահանջն է, որ որոշ հանցագործությունների, ներառյալ սեռական բռնության դեպքում հանցագործությունը նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ կատարելը ներպետական օրենսդրությամբ դիտարկվի որպես ծանրացնող հանգամանք, եթե այդ հանգամանքն արդեն իսկ չի ազդում հանցագործության որակման վրա (46-րդ հոդվածի ա) կետ)⁸³:

Ամուսնական բռնաբարության որակման հարցը մեծապես փոխկապակցված է նաև ընտանեկան բռնության հիմնախնդրի հետ: Կանանց աջակցման կենտրոնի⁸⁴ տվյալների բազայի համաձայն՝ ընտանեկան բռնության ենթարկված ամեն 4-րդ կին ենթարկվում է սեռական բռնության:

⁸² ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները ՀՀ-ի 5-րդ և 6-րդ պարբերական համակցված զեկույցի վերաբերյալ, կետ 17 a, հասանելի է անգլերենով <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/402/28/PDF/N1640228.pdf?OpenElement>

⁸³ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հասանելի է հայերենով <https://rm.coe.int/168046246d>

⁸⁴ Հարցազրույց կազմակերպության ներկայացուցչի հետ:

Ամուսնական բռնաբարությունն ընտանեկան բռնության այլ տեսակների նման կրում է պարբերական բնույթ և պաշտպանության հատուկ մեխանիզմների կիրառման կարիք ունի:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սեռական բռնությունը համարվում է նաև ընտանեկան բռնության տեսակ: Այսպիսով՝ ամուսնական բռնաբարությունը, որպես սեռական բռնության դրսևորում ընտանիքում, կարող է հիմք հանդիսանալ սեռական բռնության ենթարկված անձին անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում տրամադրելու համար:

Կանանց աջակցման կենտրոնի⁸⁵ տվյալների բազայի համաձայն՝ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում հայցելիս իրենց շահառուների մի մասը հայտնել են սեռական բռնության առկայության մասին և նույնիսկ ստացել են պաշտպանական միջոցներ, սակայն այդ տեղեկատվության տրամադրումը ոստիկանությունը բավարար չի համարել քրեական գործ հարուցելու համար: Սա ևս խոսում է իրավական համակարգում ամուսնական բռնաբարության՝ որպես հանցագործության պատշաճ ընկալման բացակայության մասին:

Մարդու իրավունքների միջազգային մարմիններն առաջարկում են.

- սահմանել ամուսնական բռնաբարությունը որպես հանցագործության առանձին տեսակ, ինչը կբարձրացնի հանցակազմի տեսանելիությունը և կնպաստի դրա ճիշտ ընկալմանը հասարակության և իրավապահ համակարգի կողմից,
- ամուսնու նկատմամբ կատարված բռնաբարությունը օրենսդրորեն ամրագրել որպես որակյալ հանցակազմ կամ ներառել ծանրացուցիչ հանգամանքների շարքում:

Այսպիսով՝ ՀՀ քրեական օրենսգրքի վերանայումը՝ նախատեսելով ամուսնու, զուգընկերոջ, նախկին ամուսնու կամ նախկին զուգընկերոջ կողմից սեռական բռնություն կատարելը որպես ծանրացնող հանգամանք, օրակարգային խնդիր պետք է լինի:

Վաղ ամուսնություն

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, ՄԱԿ-ի կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեն, ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կոմիտեն իրենց բազմաթիվ հանձնարարականներում պնդում են, որ ամուսնությունը մինչև 18 տարեկան մարդու հիմնարար ազատությունների խախտում է⁸⁶:

⁸⁵ Հարցազրույց կազմակերպության ներկայացուցչի հետ:

⁸⁶ Տե՛ս <https://data.unicef.org/topic/child-protection/child-marriage/>

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մանկահասակ աղջիկների ամուսնությունները հաճախ կասեցնում են վերջիններիս զարգացումը՝ բերելով վաղ հղիության⁸⁷ և սոցիալական մեկուսացման, ընդհատելով նրանց կրթությունը, սահմանափակելով նրանց հետագա կարիերայի հնարավորությունները և բարձրացնելով ընտանեկան բռնության ենթարկվելու ռիսկերը:

ՀՀ վիճակագրական ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից անցկացված 2015-2016 թթ. ՀՀ ժողովրդագրական և առողջապահական հարցումները (2015-16 ADHS) ցույց են տվել, որ ՀՀ-ում ապրող 20-24 տարեկան կանանց 5.2% ամուսնացել է մինչև 18 տարեկան լրանալը⁸⁸:

ՀՀ ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ պատասխանատվություն այն ծնողի նկատմամբ, որը գիտակցաբար, կամավոր և համաձայնությամբ իր երեխային կամուսնացնի, եթե երեխան չի հասել ամուսնության տարիքի: Ավելին, չնայած ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն ամուսնական տարիքը տասնութ տարեկանն է, սակայն օրենսդիրը նախատեսել է, որ անձը ամուսնանալ կարող է նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է⁸⁹: Այս բացառությունները վերացնելու առաջարկ ՀՀ-ին ներկայացրել է ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեն՝ Կոնվենցիայի պարբերական 5-րդ և 6-րդ համակցված զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում⁹⁰:

ՄԲՃԿ-ի և ՀՀ քննչական կոմիտեի կողմից 2017 թ. իրականացված «2015-2016 թթ. Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները» հետազոտության արդյունքները ցույց են տալիս⁹¹, որ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով հարուցված մի շարք քրեական գործերով, որոնցով անչափահասները 12-16 տարեկան են, ծնողները և/կամ օրինական ներկայացուցիչներն իմացել են և գիտակցաբար թույլ են տվել իրենց երեխայի կողմից փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ մտնելը չափահաս տարիքի անձի հետ՝ շատ անգամ նույնիսկ թաքցնելով ամուսնացող անձից երեխայի տարիքը: Տվյալ գործերով ծնողները և/կամ օրինական ներկայացուցիչները որևէ պատասխանատվության չեն ենթարկվել:

⁸⁷ Տե՛ս <http://www.who.int/mediacentre/factsheets/fs364/en/>

⁸⁸ Տե՛ս <https://dhsprogram.com/what-we-do/survey/survey-display-492.cfm>

⁸⁹ Այս հարցի առնչությամբ ներկայումս քննարկվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքով արգելել մինչև 18 տարեկան անձանց ամուսնություններն առհասարակ:

⁹⁰ ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները ՀՀ-ի 5-րդ և 6-րդ պարբերական համակցված զեկույցի վերաբերյալ, կետ 47 հասանելի է անգլերենով <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/402/28/PDF/N1640228.pdf?OpenElement>

⁹¹ Տե՛ս <http://saccarmenia.org/hy/news/news/research/12/>

ՄԲՃԿ դեպքերից մեկով 15-ամյա աղջկա ծնողները համաձայնել են ամուսնացնել անչափահաս դստերը վերջինիս բռնաբարած տղամարդու հետ այն բանից հետո, երբ պարզվել է, որ երեխան հղի է: Սակայն փաստացի ամուսնությունից օրեր անց տղայի և նրա ընտանիքի դրդմամբ աղջիկը կատարել է հղիության արհեստական ընդհատում, ինչից հետո նրան վերադարձրել են ծնողներին, և վերջիններս հաղորդում են տվել ոստիկանություն:

ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամը, ուսումնասիրելով վաղ ամուսնությունների խնդիրը, օրենսդրի համար մի շարք առաջարկներ է արել դրա դեմ պայքարելու համար, մասնավորապես՝ սահմանել

խիստ քրեական պատասխանատվություն բոլոր նրանց համար, ովքեր կաջակցեն կամ կնպաստեն վաղ ամուսնության կայացմանը, այդ թվում՝ նաև փեսայի և հարսի ծնողներին⁹²: Նման կարգավորումներ գործում են Չնդկաստանում, Բանգլադեշում և մի շարք այլ երկրներում: Ավելին, *Տաջիկստանի, Ղրղզստանի և Սան-Մարինոյի* քրեական օրենսգրքերում նախատեսված է պատասխանատվություն այն ծնողի համար, որը ամուսնացրել է ամուսնական տարիքի չհասած երեխային⁹³:

Չեռևաբար պետք է քրեական պատասխանատվություն սահմանել այն ծնողների համար, որոնք իրենց համաձայնությամբ և գիտակցաբար ամուսնացնում են ամուսնական տարիքի չհասած երեխային: Անհրաժեշտ է նաև վերացնել ծնողների համաձայնությամբ մինչև 18 տարեկանը օրինական ամուսնությունների գրանցումը թույլատրող ՀՀ ընտանեկան օրենսգրքի բացառությունները, քանի որ դրանք փաստացի լեգիտիմացնում են վաղ ամուսնությունները, իսկ երբեմն էլ անչափահասների բռնաբարությունները թաքցնելու միջոց են դառնում:

Սեռական ոտնձգություններ

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով սեռական ոտնձգությունը սահմանված է որպես գենդերային ուղղակի խտրականության տեսակ, սակայն չկան օրենսդրական մեխանիզմներ դրա դեմ պայքարելու համար և չկա սահմանված պատասխանատվություն սեռական ոտնձգություն իրականացնող անձի համար:

⁹² Տե՛ս [https://www.unicef.org/policyanalysis/files/Child_Marriage_and_the_Law\(1\).pdf](https://www.unicef.org/policyanalysis/files/Child_Marriage_and_the_Law(1).pdf) էջ.50

⁹³ Տե՛ս http://www.wipo.int/wipolex/ru/text.jsp?file_id=237375

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ սեռական ոտնձգությունը գենդերային խտրականության դրսևորումների տեսակ է՝ խոսքային կամ ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի գործողություններ կամ ցանկացած իրավիճակ, որոնք ուղղված են անձի արժանապատվությունը նվաստացնելուն, վախեցնելուն, թշնամությանը, ստորացմանը կամ նմանատիպ իրավիճակներին:

Ես Ստամբուլի կոնվենցիայի 40-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը, պատժելի լինի քրեական կամ որևէ այլ սանկցիայի ներքո:

Հատկապես առանձնացվում են աշխատավայրում սեռական ոտնձգությունները, որոնք խանգարում են կանանց առաջխաղացմանն աշխատաշուկայում և մեծ խոչընդոտ են գենդերային հավասարության հասնելու ճանապարհին: ՀՀ-ն վավերացրել է՝ «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության C111 կոնվենցիան», որի պահանջներից է, որ Հայաստանն աշխատանքային օրենսդրության կամ այլ օրենքներում կարգավորումներ ներառի, որոնք կնախատեսեն պատասխանատվություն սեռական ոտնձգության երկու տեսակների համար՝ *quidproquo* (ծառայություն ծառայության դիմաց) և թշնամական մթնոլորտի ստեղծում⁹⁴:

«Ծառայություն ծառայության դիմաց» սեռական ոտնձգության որոշ դրսևորումներ քրեականացված են ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածում, որի համաձայն պատժելի է անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, եթե բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 132.2-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների (թրաֆիքինգի) հատկանիշները: Սակայն այս նորմը նույնպես լրամշակման կարիք ունի:

⁹⁴ ԱՄԿ կողմից 2017 թ.-ին ՀՀ-ին ուղղված դիտարկումները, հասանելի է անգլերենով https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:13100:0::NO:13100:P13100_COMMENT_ID:3300897:NO

Այսպիսով՝ սեռական բռնության բոլոր դրսևորումներից պաշտպանվածություն ապահովելու, ինչպես նաև միջազգային պարտավորությունների իրականացման համար ՀՀ-ն պետք է ընդունի սեռական ոտնձգությունները կարգավորող համապարփակ օրենսդրություն, որը հստակ պատասխանատվություն կնախատեսի սեռական ոտնձգություններ կատարելու համար և կսահմանի մեխանիզմներ՝ այդ պատասխանատվության միջոցների կիրառումն իրական ու արդյունավետ դարձնելու համար:

Սեռական բռնության իրավիճակի վերլուծության ամփոփում

Սույն զեկույցը ներկայացնում է դատաիրավական համակարգի կողմից սեռական բռնության դեպքերին տրվող պատշաճ արձագանքի խնդիրները զոհակենտրոն մոտեցման անհրաժեշտության տեսանկյունից: Սեռական բռնության ենթարկված անձը բռնության հետևանքով ունենում է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեբանական հետևանքներ, որոնք հաճախ անտեսված են ինչպես օրենսդրությունում, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է նշել հետևյալ եզրահանգումները՝

- Սեռական բռնության ենթարկված անձի հոգեբանական տրավման (տրավմատիկ են համարվում այն իրադարձությունները, որոնք գերազանցում են օրգանիզմի հարմարման սովորական կարողությունները և ներառում են մարդու կյանքի և ֆիզիկական ամբողջականության նկատմամբ վտանգ) ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր գործողություն կազմակերպելիս՝ խուսափելով երկրորդային զոհականացումից: Օրինակ՝ սեռական բռնության ենթարկված անձը կարող է ունենալ հիշողության խնդիրներ՝ չհիշել դեպքի հետ կապված մանրամասներ, և դա ընդգծելը, անընդհատ խաչաձև հարցեր տալը կարող է մեծացնել սեռական բռնության ենթարկված անձի մեղքի զգացումը կամ մեծացնել երկրորդային զոհականացման հավանականությունը:

- Իրավապահ համակարգը, ինչպես նաև հասարակությունն իրազեկված չեն սեռական բռնության ենթարկված անձի հոգեբանական տրավմայի առանձնահատկությունների և դրսևորումների վերաբերյալ:

- Բռնաբարության (սեքսուալ բնույթի գործողությունների)՝ որպես հանցագործությունների բացահայտման և ապացուցման արդյունավետության վրա մեծապես ազդում է համաձայնության հասկացության բացակայությունը և կամքի պարզելու մեխանիզմների բարդ լինելը:

- Սեռական բռնության ոչ բոլոր տեսակներն են քրեականացված: Կարգավորման ոլորտից դուրս են նաև սեռական ոտնձգությունները:

- ԶՅ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում առանձնահատկություններ սեռական բռնության դեպքերով քրեական գործերի քննության համար, ինչի արդյունքում տուժողների հարցաքննությունը, առերեսումը, նրանց մասնակցությամբ փորձաքննությունները, ապացույցների հավաքագրման գործընթացն առհասարակ և մի շարք այլ քննչական և դատավարական գործողություններ բերում են տուժողների երկրորդային զոհականացման, ինչն անդրադառնում է քրեական գործերի քննության արդյունավետության վրա:

- Սեռական բռնության գործերի քննության ընթացքում չեն պահպանվում տուժողների անձնական կյանքի գաղտնիությունը և չի ապահովվում անձնական տվյալների պաշտպանությունը ոչ միայն իրավապահ մարմինների աշխատակիցների, այլ նաև քրեական դատավարության այլ մասնակիցների կողմից:

- ԶՅ-ում բացակայում է սեռական բռնության ենթարկված անձանց ծառայությունների մատուցման բազմաոլորտային արձագանքը պետության կողմից: Հիմնական ծառայությունները մատուցվում են ՍԲԾԿ-ի կողմից:

Առաջարկություններ

Սեռական բռնության ենթարկված անձանց հոգեբանական տրավմայի առանձնահատկություններն արտացոլված չեն ԶՅ դատաիրավական պրակտիկայում, ինչը հանգեցնում է սեռական բռնության ենթարկված անձի ռետրավմատիզացիային և խոչընդոտում արդարադատության մատչելիությունն ու նվազեցնում է այս դեպքերի քննության արդյունավետությունը:

Ուսումնասիրելով առկա իրավիճակը և համադրելով միջազգային փորձի հետ՝ ներկայացվում են օրենսդրական, ընթացակարգային և իրազեկման բարձրացմանն ուղղված մի շարք անհրաժեշտ առաջարկներ:

Օրենսդրական բարեփոխումների առաջարկներ.

- ԶՅ քրեական դատավարության օրենսգրքում կատարել փոփոխություններ և սահմանել սեռական բռնության գործերով նախաքննության և դատաքննության առանձնահատկություններ:

- ԶՅ քրեական օրենսգրքում իրավական որոշակիության սկզբունքի պահպանմամբ քրեական պատասխանատվություն նախատեսել առանց տուժողի համաձայնության կատարված բոլոր սեռական բնույթի գործողությունների համար՝ անկախ բռնության կիրառման և դիմադրության հանգամանքից:

- Քրեական պատասխանատվություն նախատեսել այն ծնողների համար, որոնք ամուսնացնում են ամուսնական տարիքը չլրացած երեխաներին կամ դրդում են դրան կամ նպաստում այդ ամուսնությանը:

- ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսել ամուսնու, զուգընկերոջ, նախկին ամուսնու կամ նախկին զուգընկերոջ կողմից սեռական բռնություն կատարելը որպես ծանրացնող հանգամանք:

- Ընդունել սեռական ոտնձգությունները կարգավորող համապարփակ օրենսդրություն, որը հստակ պատասխանատվություն կնախատեսի սեռական ոտնձգություններ կատարելու համար և կսահմանի մեխանիզմներ՝ այդ պատասխանատվության միջոցների կիրառումն իրական ու արդյունավետ դարձնելու համար:

- Օրենսդրորեն սահմանափակել քրեական (չնայած ուսումնասիրության մեջ չի քննարկվել, սակայն տրամաբանական է, որ նաև քաղաքացիական) գործերով անձի սեռական կյանքի պատմության բացահայտումը, դրան ուղղված գործողությունները նախաքննությանմարմինների կողմից և դատաքննության ժամանակ որպես ապացույց դրանց ներկայացումը:

- Վերանայել դատական տեղեկատվական պաշտոնական համակարգի կայքի շահագործման կանոնները՝ չհրապարակելով զոհերի անձնական և ընտանեկան գաղտնիք հանդիսացող տեղեկություն:

- Վերանայել ՀՀ առողջապահության նախարարի N 87-Ն հրամանը՝ սահմանափակելով կուսության ստուգման թեստի կիրառումն այն դեպքերով, երբ դրա խիստ անհրաժեշտությունը գործի ելքի համար հիմնավորված է քննիչի կողմից:

- Օրենսդրորեն ամրագրել բռնաբարության դեպքերում առողջապահական հաստատություններում ապացույցների համապարփակ հավաքագրման նոր մեխանիզմ (բռնաբարության ապացուցման արկղիկի ամերիկյան մոդելի օրինակով):

- Վավերացնել ԵԽ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման մասին» և «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» կոնվենցիաները:

- Օրենսդրությամբ արգելել ՀՀ-ում մինչև 18 տարեկան անձանց ամուսնությունների գրանցումը:

- Օրենսդրորեն ամրագրել սեռական բռնության զոհերի՝ իրավաբանական անվճար օգնություն ստանալու իրավունքը:

Ընթացակարգային փոփոխություններին ուղղված առաջարկներ.

- Քննարկել բռնաբարության դեպքերով առողջապահական հաստատություններում ապացույցների համապարփակ հավաքագրման հատուկ մեխանիզմը՝ բռնաբարության ապացուցման արկղի ամերիկյան մոդելի օրինակով, ներդնել այդ մեխանիզմը՝ անհրաժեշտության դեպքում օրենսդրորեն ամրագրելով դրա կիրառումը ՀՀ-ում:

- Ներդնել հետաքննության, նախաքննության մարմինների և դատախազների կողմից սեռական բռնության գործերի վարման ուղեցույցները՝ ինտեգրելով զոհակենտրոն և գենդերազգային մոտեցումները և սեռական բռնության ենթարկված անձի հոգեբանական առանձնահատկությունները:

- Ուժեղացնել վերահսկման մեխանիզմները ոստիկանների և քննիչների կողմից էթիկայի կանոնների խախտումների համար սահմանված պատասխանատվության կիրառման նկատմամբ:

- Ներդնել սեռական բռնության ենթարկված անձանց աջակցության պետական ծրագրեր:

- Ներդնել միասնական տեղեկատվական բազա սեռական բռնության հանցագործությունների հաշվառման համար:

- Իրավապահ համակարգում ավելացնել կին քննիչների թիվը և նրանց ներգրավել սեռական բռնության գործերի քննությանը:

Իրազեկման բարձրացմանն ուղղված առաջարկներ.

- Վերապատրաստել ոստիկաններին, քննիչներին, դատախազներին, դատավորներին և փաստաբաններին սեռական բռնության ենթարկված անձանց հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ՝ սեռական բռնության գործերն առավել արդյունավետ քննելու համար:

- Սեռական կրթության ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև սոցիալական գովազդների ու հեռուստածրագրերի միջոցով իրազեկել հասարակությանը սեռական հարաբերություններում «համաձայնություն» ստանալու և դիմացիկին հարգելու անհրաժեշտության մասին:

- Բարձրացնել հանրության իրազեկման մակարդակը սեռական բռնության հիմնախնդրի վերաբերյալ, ինչպես նաև սեռական բռնության ենթարկված անձի հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ՝ կանխարգելելով մեղադրական վերաբերմունքը:

Մաս III

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն.
գործունեության անդրադարձ




սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի կողմից ծառայություններ ստացած դեպքերի վերաբերյալ քանակական տվյալների վերլուծություն

«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն 2008-2018 թթ. աշխատել է 87 դեպքի հետ, որոնց մեջ տուժող է եղել 88 անձ⁹⁵: Պատկերն էականորեն չի փոփոխվել 2016 և 2017 թթ., բռնաբարության դեպքերով կենտրոն է դիմել ընդհանուր դեպքերի 69%-ը, որը համարվել է դիմած դեպքերով սեռական բռնության առավել տարածված տեսակը:



ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՔԱՆԱԿԸ




⁹⁵ 2016 թ. արձանագրվել է 14 դեպք, մինչդեռ տուժողների թիվը եղել է 15:



ԿԵՆՏՐՈՆ ԴԻՄԱԾ ԱՆՁԱՆՑ ՍԵՌԸ


Ինչպես երևում է գծագրից, կենտրոն դիմած անձանց 94%-ը եղել է իգական սեռի ներկայացուցիչ և միայն 6%-ը՝ արական սեռի:





ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ


Ներքոնշալ գծագրից պարզ է դառնում, որ 2008-2015 թթ. սեռական բռնության դեպքերով դիմել են հիմնականում բռնաբարության ենթարկված անձինք՝ կազմելով ընդհանուր դեպքերի 60%-ը, սեռական բռնության հաջորդ տարածված տեսակն է սեռական ոտնձգությունները հանրային վայրերում:







արձանագրված սեռական բռնության տեսակները

Պատկերն էականորեն չի փոփոխվել 2016 և 2017 թթ., բռնաբարության դեպքերով կենտրոն է դիմել ընդհանուր դեպքերի 69%-ը, որը համարվել է դիմած դեպքերով սեռական բռնության առավել տարածված տեսակը:





Պատկերը փոխվում է 2018 թ., կենտրոն դիմած դեպքերի մեծամասնությունը վերաբերում է սեռական ոտնձգություններին և կազմում ընդհանուր դեպքերի 40%-ը:





ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

2016-2018 թթ. կենտրոն դիմած անձանց 80%-ը ունեցել են ԶԶ քաղաքացիություն:

Հատկանշական է, որ 2018 թ. կենտրոն են դիմել 4 օտարերկրյա քաղաքացի, որոնք եղել են երիտասարդ կանայք և Հայաստանում են գտնվել կամավորության կամ զբոսաշրջության նպատակով: Այդ քաղաքացիներից 2-ի նկատմամբ եղել է բռնաբարության փորձ, իսկ մյուս 2-ի նկատմամբ՝ սեռական ոտնձգություն:



սեռական բռնության ենթարկված անձանց քաղաքացիությունը






սեռական բռնության ենթարկված անձանց
քաղաքացիությունը



սեռական բռնության ենթարկված անձանց
քաղաքացիությունը






ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԻՔԸ

2016-2018 թթ. կենտրոն դիմած անձանց 54%-ը եղել են չափահաս, իսկ 46%-ը՝ անչափահաս: Հաստատանքական է, որ կենտրոն դիմած անձանցից, որոնց տրվել է աջակցություն, ամենակրտսերը եղել է 5 տարեկան երեխա, իսկ ամենատարեցը՝ 50 տարեկան կին: Անչափահասների դեպքում սեռական բռնություն հիմնականում արձանագրվել է 14-16 տարիքային խմբում:




ՍԵՌԱԿԱՆ ԲՐՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԻՔԸ






սեռական բռնության ենթարկված անձանց տարիքը



սեռական բռնության ենթարկված անձանց տարիքը





ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՉԱՓԱՅԱՍ ԱՆՁԱՆՑ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Չափահասների շրջանում կենտրոն դիմած անձաց մեծամասնությունը՝ 58%-ը, եղել են չամուսնացած և 35%-ը՝ ամուսնացած:




ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ





սեռական բռնության ենթարկված չափահասների
ամուսնական կարգավիճակը



սեռական բռնության ենթարկված չափահասների
ամուսնական կարգավիճակը






ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Ներքոնշյալ գծագրերի վերլուծությունը վկայում է, որ դեպքերն արձանագրվել են ՀՀ գրեթե բոլոր մարզերում, մինչդեռ առավել շատ դիմել են **անձինք, որոնք բնակվում են Երևանում (70%) և Արմավիրում (16%)**: Տվյալներից կարելի է եզրակացնել, որ հասարակությունում առկա գենդերային կարծրատիպերը շարունակում են ազդել սեռական բռնության բարձրաձայնման և ծառայությունների դիմելիության վրա, մասնավորապես՝ մարզերում գենդերային կարծրատիպերը շատ ավելի ուժեղ են և ազդում են անձանց կողմից սեռական բռնության վերաբերյալ բարձրաձայնման վրա:




սեռական բռնության ենթարկված անձանց բնակավայրը






սեռական բռնության ենթարկված անձանց բնակավայրը



սեռական բռնության ենթարկված անձանց բնակավայրը






ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՎ ԱՆՁԻ ԵՎ ԲՈՆԱՐԱՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԸ

Չափահասների դեպքում սեռական բռնություն իրականացվել է ինչպես անծանոթի, այնպես էլ ծանոթի կողմից: Այսպես, անծանոթ չափահասի կողմից իրականացված սեռական բռնությունը կազմել է ընդհանուր դեպքերի 22%-ը, իսկ 78%-ը՝ ծանոթ չափահասի կողմից:

Անչափահասների դեպքում սեռական բռնությունը գործադրվել է միմիայն ծանոթ անձի կողմից, որը, չարաշահելով երեխայի վստահությունը, սեռական բռնություն է կիրառել անչափահասի նկատմամբ: Այսպես, առավել տարածված դեպքեր են՝ հարևանի կողմից սեռական բռնությունը անչափահասի նկատմամբ, որը կազմել է ընդհանուր դեպքերի 11%-ը, մոր զուգընկերոջ կողմից սեռական բռնությունը, որ կազմել է դեպքերի 8%-ը:




Արձանագրված սեռական բռնության ենթարկված անձի և բռնարարի միջև կապը






արձանագրված սեռական բռնության ենթարկված անձի
և բռնարարի միջև կապը



արձանագրված սեռական բռնության ենթարկված անձի
և բռնարարի միջև կապը






ԱՐՃԱՆԱԳՐՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016-2018 թթ. արձանագրված դեպքերի 41%-ում սեռական բռնությունը տեղի է ունեցել պարբերաբար, իսկ դեպքերի 59%-ում՝ մեկ անգամ: Պարբերաբար կրկնվող դեպքերը հիմնականում վերաբերում են անչափահասների սեռական բռնության և ամուսնական բռնաբարության դեպքերին:




արձանագրված դեպքերի պարբերականությունը






արձանագրված դեպքերի պարբերականությունը




արձանագրված դեպքերի պարբերականությունը





ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

Արձանագրված դեպքերի 42%-ում սեռական բռնությունը գործադրվել է բռնության ենթարկված անձի տանը, հաջորդ առավել տարածված վայրերն են համարվում ավտոմեքենան և բակը՝ կազմելով ընդհանուր դեպքերի 11%-ը:




ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՎ ԻՐԱՎԱՊԱՅ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր դեպքերի 61%-ում եղել է հաղորդում իրավապահ մարմիններին տեղի ունեցած հանցագործության վերաբերյալ: Մնացած 39%-ում անձինք հրաժարվել են հաղորդում ներկայացնել իրավապահ մարմիններին դեպքի վաղեմության ժամկետի, ապացույցների բավարար քանակի բացակայության, սեռական բռնություն գործադրած անձից վախենալու, իրավապահ համակարգի կողմից կրկնակի զոհականացման և հաղորդում ներկայացնելու և քրեական գործ հարուցելու խրթինության պատճառով:



արձանագրված դեպքերով իրավապահ համակարգի դիմելիությունը




ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

2016-2018 թթ. կենտրոնն դիմած 37 անձանցից 19-ը, կամ **դեպքերի 51%-ը** սեռական բռնության՝ հիմնականում բռնաբարության կամ բռնաբարության փորձի պատճառով առողջական խնդիրներ ունեն: Հիմնականում դրանք եղել են տարբեր ծանրության մարմնական վնասվածքներ (կապտուկներ մարմնի տարբեր հատվածներում, մկանային ջղաձգումներ) և սեռական օրգանների շրջանում վնասվածքներ: Երկու անչափահաս հղիացել են բռնաբարության հետևանքով:

Հարկ է արձանագրել, որ այս տվյալներն ամբողջական չեն, քանի որ կենտրոնն են դիմել նաև անձինք, որոնց նկատմամբ բռնությունը տեղի է ունեցել անցյալում:



սեռական բռնության պատճառով առաջացած հետևանքները




ՍԵՌԱԿԱՆ ԲՐՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՅՈՐԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԿԵՆՏՐՈՆ ԴԻՄԵԼՈՒ ՊԱՅԻՆ


2016-2018 թթ. կենտրոն ծառայություններ ստանալու համար դիմած անձանց շուրջ 40%-ը ունեցել են հոգեբանական խնդիրներ, այդ թվում՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարում, որոնք պահանջել են երկարատև հոգեբանական աջխատանք: Հատկանշական է, որ այս թիվն ամբողջական է, որովհետև սեռական բռնության ենթարկված անձանց շուրջ 30%-ը հրաժարվել է հոգեբանական ծառայություններից և հետևաբար, նրանց հետ չի իրականացվել հոգեբանական գնահատում: Ստորև ներկայացվում են այն հոգեբանական խնդիրները, որոնք ունեցել են սեռական բռնության ենթարկված անձինք, որոնք ստացել են հոգեբանական աջակցություն:



դիմաժ անձանց հոգեբանական վիճակը




դիմաժ անձանց հոգեբանական վիճակը





դիմաժ անձանց հոգեբանական վիճակը




2016-2018 թթ. կենտրոն դիմաժ 37 դեպքով արձանագրվել է 40 բռնարար: 39-ի դեպքում արական սեռի ներկայացուցիչ և միայն մեկ դեպքում՝ իգական: Բոլորը 33 քաղաքացի:

Բռնարարների տարիքային առանձնահատկությունները


Բռնարարների տարիքային խումբը եղել է շատ տարբեր, թերևս 31-35 տարեկանների խումբը եղել է առավել տարածվածը՝ կազմելով դեպքերի 30%-ը: Ամենատեսակարարը եղել է 11 տարեկան և ամենաավագը՝ 65 տարեկան:



բռնարարի տարիքը




բռնարարի տարիքը






բռնարարի տարիքը



ԴԻՄԱԾ ԴԵՊԵՐՈՎ ԲՐՆԱՐԱՐՆԵՐԻ ԴԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ






ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենտրոնը 2016-2018 թթ. բոլոր դեպքերով դիմած անձանց մատուցել է սոցիալական աջակցության ծառայություններ, այդ թվում՝ անսնուն խորհրդատվություն: Ընդհանուր առմամբ սոցիալ-հոգեբանական աջակցությունը հիմնականում տրամադրվել է դեպքի դիմելուց հետո 2 տարիների ընթացքում, իսկ իրավաբանական աջակցությունը կարող էր շարունակվել ընդհուպ մինչև 4 տարի: Ստորև ներկայացվում են կենտրոնի մատուցած ծառայություններն առավել մանրամասն:



մատուցած ծառայությունները






ուղղորդված ծառայությունները

2016-2018 թթ. 11 դեպքի համար կազմակերպվել են նաև բժշկական ծառայություններ և ուղղորդվել ապաստարան: Ապաստարանի դեպքում ուղղորդումներ են եղել այլ կառույցներ, որոնք ունեցել են ծառայության այդ տեսակը:



ուղղորդված ծառայությունները



- ապաստարան
- բժշկական ծառայություն




սեռական բռնության ենթարկված անձինք կենտրոնի մասին տեղեկացել են հետևյալ աղբյուրներից՝

2016-2018 թթ. սեռական բռնության ենթարկված անձինք կենտրոնի մասին տեղեկություն ստացել են իրենց **ծանոթից**, որը կազմել է ընդհանուր **դեպքերի 33%-ը**: Հատկանշական է, որ վերջին 2 տարիների ընթացքում կենտրոնի հետ համագործակցություն են սկսել նաև պետական կառույցները, մասնավորապես՝ դեպքով աշխատող **քննիչը կամ դատախազը՝ ուղղորդելով** սեռական բռնության ենթարկված անձանց. սա կազմել է դեպքերի **14%-ը**: Դեպքերը հիմնականում վերաբերել են անչափահասներին:




հետևյալ աղբյուրներից են անձինք տեղեկացել կենտրոնի մասին






հետևյալ աղբյուրներից են անձինք տեղեկացել կետրոնի մասին



հետևյալ աղբյուրներից են անձինք տեղեկացել կետրոնի մասին





ՀՀ ՔՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացվում է ՀՀ քննչական կոմիտեի և ոստիկանության պաշտոնական վիճակագրությունը սեռական բռնության դեպքերի մասին:

2017 թ. ոստիկանության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 138-142 հոդվածներով արձանագրվել է 102 դեպք, մինչդեռ քննչական կոմիտեի կողմից նույն ժամանակահատվածի համար նույն հոդվածներով արձանագրվել է 161 դեպք:

Թվային նման տարբերությունը մատնանշում է իրավապահ համակարգի կողմից վարվող մեկ միասնական տեղեկատվական բազայի բացակայության մասին, որի առկայությունը կենտրոնական հաշվառում կվարի այս դեպքերով և կբացառի վիճակագրության նման տարբերակված տրամադրումը:



ՀՀ ոստիկանության և քննչական կոմիտեի կողմից արձանագրված սեռական բռնության դեպքերը




Ստորև ներկայացվող տեղեկատվությունը տրամադրվել է միայն քննչական կոմիտեի կողմից 2017 թ. համար:

Այսպես, ներքոնշյալ գծագրից երևում է, որ քննվող դեպքերի 38%-ը կարճվել է, որը թվային տեսանկյունից առավելագույն ցուցանիշն է: Դեպքերի 29%-ը ուղարկվել է դատարան մեղադրական եզրակացությամբ:



ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ




2017 թ. ՀՀ քննչական կոմիտեում արձանագրվել է 161 քրեական գործ, որով տուժող է ճանաչվել 166 անձ:

Ինչպես «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի» դեպքերի մեծամասնությունը, այնպես էլ քննչական կոմիտեից ստացված տվյալների համաձայն դեպքերի շուրջ 91%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:



սեռական բռնության ենթարկված տուժողների սեռը

ՀՀ քննչական կոմիտե





Տարիքային ցուցանիշի վերլուծության պարագայում ևս նկատվում է կազմակերպության և քննչական կոմիտեի ներկայացված վիճակագրության օրինաչափություն: Այսպես, ՀՀ քննչական կոմիտեի պարագայում ևս հարուցված հիմնական դեպքերը վերաբերում են 14-17 տարիքային խմբին՝ կազմելով դեպքերի 54%-ը:

Ըստ արձանագրված դեպքերի՝ ամենակրտսեր տուժողը եղել է 5 տարեկան երեխա:




սեռական բռնության ենթարկված տուժողների տարիքը



Տուժողների շուրջ 89%-ն ազգությամբ հայ են:




արձանագրված դեպքերով տուժողների ազգությունը



Արձանագրված սեռական բռնության տեսակները՝ ըստ ՀՀ քննչական կոմիտեի

Անդրադառնալով սեռական բռնության տեսակներին՝ ՀՀ քննչական կոմիտեում առավել շատ քրեական գործեր հարուցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, որը վերաբերում է սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը 16 տարին չլրացած անձի հետ և կազմում դեպքերի 40%-ը:

ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ




Մեղադրյալ/կասկածյալների տարիքը և ազգությունը

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի՝ 2017 թ. 161 քրեական գործով որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավվել է 93 անձ, բոլորն էլ արական սեռի ներկայացուցիչ՝ հետևյալ տարիքային խմբերից.

⁹⁶ Հոդվածների հղումը տե՛ս հավելված 1-ում:


մեղադրյալ/ կասկածյալների տարիքը



Ինչպես երևում է վերոնշյալ գծագրից, մեղադրյալ/կասկածյալների հիմնական խումբը 18-25 տարեկան է:

Մեղադրյալ/կասկածյալների մեծ մասն ազգությամբ հայ է:

մեղադրյալ/ կասկածյալների ազգությունը



Մեղադրյալ/կասկածյալների 85%-ը նախկինում դատվածություն չի ունեցել:




մեղադրյալ/ կասկածյալների դատվածությունը

- դատվածություն չեն ունեցել
- դատվածություն ունեցել են



2017 թ. որպես կասկածյալ/մեղադրյալ ներգրավված 93 անձանց նկատմամբ կիրառվել են հետևյալ խափանման միջոցները՝



Հատկանշական է, որ այս հանցագործության նկատմամբ կիրառված առավել տարածված խափանման միջոցը ստորագրությամբ չհեռանալու մասին միջոցն է, որը կիրառվել է դեպքերի 65%-ում:

Վերոնշյալ պաշտոնական վիճակագրությունը մանրամասնորեն արտացոլում է միայն 2017 թ.-ին արձանագրված դեպքերը, որովհետև ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ ոստիկանության կողմից 2018 թ. արձանագրված դեպքերի մասին տրամադրվել է միայն ստորև ներկայացվող տեղեկությունը:

2018 թ. Ոստիկանությունում արձանագրվել է 84 սեռական բռնության դեպք, որից 80-ը՝ իգական սեռի ներկայացուցչի նկատմամբ:

ՀՀ քննչական կոմիտեն հայտնել է, որ 2018 թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների վարույթում գտնվող ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածով հարուցված քրեական գործերի մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 9-ը, կարճվել՝ 31-ը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածով հարուցված քրեական գործերից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 10-ը, կարճվել՝ 13-ը:

ՀՀ քրեական օրենսգրքի մյուս հոդվածներով հարուցված կամ ավարտված քրեական գործերի վերաբերյալ վիճակագրական տվյալներ առկա չեն:

Այսպիսով՝ Քննչական կոմիտեի կողմից 138 և 139 հոդվածներով հարուցվել է 63 դեպք, որից 44-ը՝ կարճվել:

Քանակական տվյալների ամփոփում

Այսպիսով՝ 2008-ից ՍԲՃԿ-ն ծառայություններ է մատուցում սեռական բռնության ենթարկված անձանց՝ տրամադրելով բազմամասնագիտական աջակցություն ինչպես չափահասներին, այնպես էլ՝ անչափահասներին:

- ✓ 2008-2018 թթ. կազմակերպությունն աշխատել է 87 դեպքի հետ, որոնցում տուժող է եղել 88 անձ⁹⁷:
- ✓ Կենտրոնն դիմած անձանց 94%-ը եղել է իգական սեռի ներկայացուցիչ, 6%-ը՝ արական սեռի:

⁹⁷2016 թ. արձանագրվել է 14 դեպք, մինչդեռ տուժողների թիվը եղել է 15:

✓ 2016-2018 թթ. կենտրոնն դիմած անձանց 54%-ը եղել են չափահաս, իսկ 46%-ը՝ անչափահաս: Հատկանշական է, որ կենտրոնն դիմած անձանցից, ում տրվել է աջակցություն, ամենակրտսերը եղել է 5 տարեկան, իսկ ամենատարեցը՝ 50: Անչափահասների դեպքում սեռական բռնություն հիմնականում արձանագրվել է 14-16 տարիքային խմբում:

✓ Սեռական բռնության դեպքերով դիմել են հիմնականում բռնաբարության ենթարկված անձինք, սեռական բռնության հաջորդ տարածված տեսակն է սեռական ոտնձգությունները հանրային վայրերում:

✓ 2016-2018 թթ. կենտրոնն դիմած անձանց 80%-ը ունեցել են ՀՀ քաղաքացիություն:

Հափահասների շրջանում կենտրոնն դիմած անձաց մեծամասնությունը՝ 58%-ը, եղել է չամուսնացած, և 35%-ը՝ ամուսնացած:

✓ Կենտրոնում դեպքեր արձանագրվել են ՀՀ գրեթե բոլոր մարզերից, մինչդեռ առավել շատ դիմել են անձինք, որոնք բնակվում են Երևան քաղաքում (70%) և Արմավիրի մարզում (16%):

✓ Հափահասների դեպքում սեռական բռնություն իրականացվել է ինչպես անծանոթի, այնպես էլ ծանոթի կողմից: Այսպես, անծանոթ չափահասի կողմից իրականացված սեռական բռնությունը կազմել է ընդհանուր դեպքերի 22%-ը, իսկ 78%-ը՝ ծանոթ չափահասի կողմից: Անչափահասների դեպքում սեռական բռնությունը գործադրվել է ծանոթ անձի կողմից, որը, չարաշահելով երեխայի վստահությունը, սեռական բռնություն է կիրառել անչափահասի նկատմամբ: Այսպես, առավել տարածված ցուցանիշներն են հարևանի կողմից սեռական բռնությունը անչափահասի նկատմամբ, որը կազմել է ընդհանուր դեպքերի 11%-ը, մոր զուգընկերոջ կողմից սեռական բռնությունը, որ կազմել է դեպքերի 8 %-ը:

✓ ՍԲՃԿ դեպքերի 41%-ում սեռական բռնությունը տեղի է ունեցել պարբերաբար, իսկ դեպքերի 59%-ում՝ մեկ անգամ: Պարբերաբար կրկնվող դեպքերը հիմնականում վերաբերում են անչափահասների սեռական բռնության և ամուսնական բռնաբարության դեպքերին:

✓ Արձանագրված դեպքերի 42%-ում սեռական բռնությունը գործադրվել է բռնության ենթարկված անձի տանը, հաջորդ առավել տարածված վայրերն են համարվում ավտոմեքենան և բակը՝ կազմելով ընդհանուր դեպքերի 11%-ը:

✓ **Դեպքերի 61%-ում եղել է հաղորդում իրավապահ մարմիններին տեղի ունեցած հանցագործության վերաբերյալ: Մնացած 39%-ում անձինք հրաժարվել են հաղորդում ներկայացնել իրավապահ մարմիններին դեպքի վաղեմության ժամկետի, ապացույցների բավարար քանակի բացակայության, սեռական բռնություն գործադրած անձից վախենալու, իրավապահ համակարգի կողմից պիտակավորման և հաղորդում ներկայացնելու և քրեական գործ հարուցելու խրթինության պատճառով:**

✓ **2016-2018 թթ. կենտրոն դիմած 37 անձանցից 19-ը, կամ դեպքերի 51%-ը սեռական բռնության՝ հիմնականում բռնաբարության կամ բռնաբարության փորձի պատճառով առողջական խնդիրներ ունեն:**

✓ **2016-2018 թթ. կենտրոն ծառայություններ ստանալու համար դիմած անձանց շուրջ 40%-ը ունեցել են հոգեբանական խնդիրներ, այդ թվում՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարում:**

✓ **2016-2018 թթ. կենտրոն դիմած 37 դեպքով արձանագրվել է 40 բռնարար:**

✓ **Բռնարարների տարիքային խումբը եղել է շատ տարբեր, թերևս 31-35 տարեկանների խումբն եղել է առավել տարածվածը՝ կազմելով դեպքերի 30%-ը: Ամենաերիտասարդը եղել է 11 տարեկան և ամենաավագը՝ 65 տարեկան:**

✓ **Կենտրոնի կողմից 2016-2018 թթ. բոլոր դեպքերով մատուցվել է սոցիալական աջակցության ծառայություններ, այդ թվում՝ անանուն խորհրդատվություն: 21 դեպքերով ներգրավվել է փաստաբան, իսկ 25 դեպքով՝ հոգեբան:**

✓ **2016-2018 թթ. 11 դեպքի համար կազմակերպվել են նաև բժշկական ծառայություններ և ուղղորդվել են ապաստարան:**

✓ **2016-2018 թթ. սեռական բռնության ենթարկված անձինք կենտրոնի մասին տեղեկություն ստացել են իրենց ծանոթից, որը կազմել է ընդհանուր դեպքերի 33%-ը: Հատկանշական է, որ վերջին 2 տարիների ընթացքում կենտրոնի հետ համագործակցություն են սկսել նաև պետական կառույցները, մասնավորապես՝ դեպքով աշխատող քննիչը կամ դատախազը՝ ուղղորդելով սեռական բռնության ենթարկված անձանց, որը կազմել է դեպքերի 14%-ը:**

Դեպքերը հիմնականում վերաբերել են անչափահասներին:

ՀՀ ոստիկանությունից և քննչական կոմիտեից ստացված տվյալները վկայում են, որ

✓ 2017 թ. ոստիկանության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 138-142 հոդվածներով արձանագրվել է 102 դեպք, մինչդեռ քննչական կոմիտեի կողմից նույն ժամանակահատվածի համար նույն հոդվածներով արձանագրվել է 161 դեպք:

✓ 2018 թ. ոստիկանության կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 138-142 հոդվածներով արձանագրվել է 84 սեռական բռնության դեպք, որից 80-ը իգական սեռի ներկայացուցչի նկատմամբ: Մինչդեռ քննչական կոմիտեն չի տրամադրել 2018 թ. ՀՀ քրեական օրենսգրքի 138-142 հոդվածներով արձանագրված դեպքերի ամբողջական թվերը:

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի մասին

ՄԲԾԿ-ն հիմնադրվել է Երևանում 2008 թ.-ին:

Այն միակ մասնագիտացված կազմակերպությունն է ՀՀ-ում, որը ծառայություններ է մատուցում սեռական բռնության ենթարկված անձանց: ՄԲԾԿ-ն ֆեմինիստական կազմակերպություն է, որի նպատակն է կանխարգելել սեռական բռնությունը ՀՀ-ում և պայքարել դրա դեմ:

Աջակցելով սեռական բռնության ենթարկված անձանց՝ կենտրոնը ոչ միայն օգնում է նրանց հաղթահարել կատարվածը, այլև զորեղացնում է նրանց և լսելի դարձնում նրանց ձայնը: Կենտրոնն իր աշխատանքներում կիրառում է ֆեմինիստական թերապիան և ֆեմինիստական շահերի պաշտպանությունը՝ որպես միջոց՝ դիմադրելու հայրիշխանական համակարգի կողմից կիրառվող ուժին և ճնշումներին կանանց կյանքի և մարմնի նկատմամբ:

Մեր տեսլականն է ունենալ խտրականությունից, կնատյացությունից և բռնությունից զերծ հասարակություն, որտեղ անձի ընտրությունը և արժանապատվությունը գերազույն արժեքներ են:

Մենք հավատում ենք, որ

- Սեռական բռնությունն իշխանության և ուժի հաստատումն է:
- Քանի դեռ առկա է գենդերային անհավասարություն, կլինի նաև սեռական բռնություն:
- Բռնությունը հնարավոր է հաղթահարել:
- Մենք ստեղծում ենք անվտանգ միջավայր՝ արժևորելով բազմազանությունը և անձի արժանապատվությունը:
- Մենք տրամադրում ենք ոչ քննադատ և ոչ խտրական ծառայություններ սեռական բռնության ենթարկված ցանկացած անձի:
- Ծառայությունները պետք է լինեն մատչելի և հասանելի բոլոր խմբերի համար:
- Հասարակության մեջ առկա անհավասար իշխանությանը հնարավոր է հակադրվել կանանց զորեղացմամբ և կանանց կոլեկտիվ ձայնի բարձրաձայնմամբ:
- Անձնականը քաղաքական է:

Կենտրոնի ստեղծման պատմությունը

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպված հանդիպումների ժամանակ որոշ կանայք պատմում էին իրենց հետ տեղի ունեցած սեռական բռնության տարբեր դրսևորումների մասին, ինչպես նաև դրանց մասին խոսելու ապահով տարածքների բացակայության մասին: Այս ամենի հետ մեկտեղ իրավապահ համակարգի նկատմամբ անվստահությունը, ինչպես նաև տաբուն, որբնորոշ էր սեռական բռնությանը հայրի շխանական հայ հասարակությունում, խոչընդոտում էր շատ կանանց, որոնք վերապրել էին սեռական բռնություն, դիմել իրավապահ համակարգին, մինչդեռ տրավման, որ ստացել էին այս կանայք, բռնության հետևանքով շարունակում էր մնալ նրանց հետ երկար տարիներ: Որևէ մասնագիտական կազմակերպության բացակայությունը, որը կառաջարկեր աջակցող ծառայություններ սեռական բռնության ենթարկված անձանց այդ շրջանում, նպաստեց ՍԲԾԿ-ի հիմնադրմանը 2008 թ.-ին: Սկսած 2012 թ. կենտրոնը սկսեց աշխատել նաև անչափահասների հետ:

Կենտրոնի գործունեությունը

ՍԲԾԿ-ն տրամադրում է սոցիալական աջակցություն՝ օգնելով անձին լուծել սեռական բռնության հետևանքով առաջացած սոցիալական խնդիրները, հոգեբանական աջակցություն վերապրածներին՝ հաղթահարելու սեռական բռնության հետևանքով առաջացած տրավման, ինչպես նաև փաստաբանական աջակցություն, այդ թվում՝ դատական ներկայացուցչություն՝ հասնելու արադարության և խախտված իրավունքների վերականգնման: Կենտրոնն իր աշխատանքը կառուցում է Ֆեմինիստական արժեքների վրա:

Ֆեմինիստական մոտեցումը, որով աշխատում են կենտրոնի մասնագետները անհատական և խմբային աշխատանքները կառուցելիս, հիմնվում է իշխանության վերախմայնացման, գործընթացի հավասար կառավարման և «անձնականը քաղաքական է» մոտեցումների վրա⁹⁸:

Միջմասնագիտական մոտեցումը, որով աշխատում է կազմակերպությունը այլ կառույցների հետ, նախատեսում է պետական և հասարակական տարբեր կառույցների մասնագետների մասնակցություն և համագործակցություն միևնույն դեպքի վարման շրջանակներում, և որը կենտրոնացած է կնոջ և երեխայի իրավունքների վրա:

⁹⁸ Տե՛ս Ֆեմինիստական միջամտությունը սոցիալական աշխատանքում և հոգեբանական խորհրդատվության մեջ:

Կենտրոնում գործում է անվճար աջակցության թեժ-գիծ, որն առաջարկում է նաև կոնֆիդենցիալ/գաղտնի խորհրդատվություն բոլոր այն անձանց, որոնք ենթարկվել են սեռական բռնության որևէ տեսակի:

Սեռական բռնություն վերապրածների հետ կենտրոնն աշխատում է ինչպես անհատական խորհրդատվության, այնպես էլ խմբային թերապիայի միջոցով:


ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ




հոգեբանական
աջակցություն



24/7 թեժ-գիծ
ծառայություն



սոցիալական
աջակցություն




խմբային
թերապիա



շահերի
պաշտպանություն
և լոբբինգ



փաստաբանական
աջակցություն



իրազեկումներ և հանրային
պատմույթի ձևավորում



մասնագետների
վերապատրաստումներ
և գեներալացում
մոտեցման ձևավորում

Անհատական և խմբային ծառայություններ սեռական բռնության ենթարկված անձանց համար

Անհատական ծառայությունները կազմակերպության հիմնական առաջնահերթություններից են, որոնք աջակցում են կանանց ու աղջիկներին արդարադատության վերականգման գործընթացում, օգնում նրանց հաղթահարել սեռական բռնության սոցիալ-հոգեբանական հետևանքները և պարզապես ստեղծել անվտանգ, ոչ քննադատական մի տարածք, որտեղ կանայք ու աղջիկները կարող են խոսել իրենց հետ կատարվածի մասին:

Ցանկացած դեպքի հետ աշխատելիս կարևոր գործընթացը սկսվում է իրավիճակի համալիր գնահատումից, անձի խնդիրների և ռեսուրսների քարտեզագրումից, այդ թվում՝ տվյալ անձի աջակցության ցանցի հետ աշխատանքների կառուցումից: Գնահատմանը հաջորդում է բուն ծառայությունների մատուցումը:

ՍԲԾԿ-ի ծառայություններն են՝

Անհատական սոցիալական աջակցություն. սեռական բռնության հետևանքները շատ հաճախ ազդում են անձի ոչ միայն հոգեկան առողջության, այլ նաև սոցիալական բարեկեցության վրա, ինչի պատճառով անձի մոտ կարող են առաջանալ մի շարք սոցիալական խնդիրներ, որոնց լուծման համար կենտրոնը տրամադրում է սոցիալական աջակցության ծառայություններ: Այս ծառայությունները հատկապես արդիական են սեռական բռնության ենթարկված անչափահասների դեպքում, որտեղ աջակցության շրջանակը տարածվում է նաև անչափահասի ընտանիքի անդամների վրա: Այս ծառայությունների շրջանակում անձը կարող է ուղղորդվել այլ աջակցող ծառայությունների, ինչպես օրինակ՝ բժշկի մոտ խորհրդատվության, ապաստարան և այլն:

Անհատական հոգեբանական աջակցություն. ուղղված է այցելուի տրավմատիկ փորձի վերապրելուն և ապագայի նկատմամբ վստահության վերագտնելուն: Հոգեբանական աջակցությունը նպաստում է այցելուի հույզերի հանգստացմանը/կայունությանը, ինքնաճանաչողությանը, ներքին և արտաքին ռեսուրսների բացահայտմանը, կատարվածի վերապրմանը, ինքնավստահության և ինքնազնահատականի բարձրացմանը, տազնապայնության ու դեպրեսիվության նվազեցմանը, կյանքի որակի վերականգնմանը՝ ներառյալ միջանձնային հարաբերությունների, ակտիվության տարբեր տեսակների, հետաքրքրությունների վերաիմաստավորմանը և կարևորմանը և հոգետրավմայի արձագանքման ռեակցիաների, ախտանիշների նվազեցմանը:

Անհատական փաստաբանական աջակցություն. սեռական բռնության ենթարկված անձը կարող է հաղորդում ներկայացնել իրավապահ համակարգ իր հետ կատարվածի վերաբերյալ: Վերջինիս համաձայնությամբ քրեական գործի հարուցման դեպքում անձին տրամադրվում է փաստաբանական աջակցություն նախաքննության և դատավարության փուլերում:

Խմբային հոգեբանական աջակցություն. կազմակերպվում է խմբային հանդիպումների միջոցով, որոնք նախատեսված են սեռական բռնության ենթարկված կանանց համար: Խմբային հանդիպումները փակ են. խմբի անդամները, ըստ նախնական պայմանավորվածության, մնում են անփոփոխ, և նոր անդամներ չեն ներգավվում մինչ խմբի ավարտը: Խմբային հանդիպումների կարևոր սկզբունքը գաղտնապահությունն է և ապահով միջավայրի ստեղծումը մասնակիցների համար: Խմբային հանդիպումները հնարավորություն են տալիս քննարկելու սեռական բռնության ազդեցությունը իրենց կյանքի և հարաբերությունների վրա: Թեմաները ներառում են սեռական բռնություն և արձագանքը սեռական բռնությանը, ապահովություն, պաշտպանություն, ինքնախնամք, մեղքի զգացում/ամոթ/ինքնամեղադրանք, վստահություն, զայրույթ, մարմնի պատկեր և փորձի նշանակությունն ու ազդեցությունը մասնակիցների կյանքում:

Իրազեկման աշխատանքներ

Կենտրոնն իր գործունեության ընթացքում առաջնային է համարում սեռական բռնության հիմնախնդրի վերաբերյալ իրազեկման բարձրացումը, սեռական բռնության վերաբերյալ առկա միջերի և կարծրատիպերի հաղթահարումը հասարակության շրջանում:

Այս ուղղությամբ ՍԲԾԿ-ն իրականացնում է հետևյալ իրազեկման միջոցառումները՝

1. Դասընթաց-հանդիպումներ հասարակության տարբեր խմբերի հետ.

Որպես թիրախ հիմնականում ընտրվում են երիտասարդ կանայք, քանի որ միջազգային և ՀՀ փորձառությունից երևում է, որ առավել հաճախ սեռական բռնության ենթարկվում են անչափահասներն ու 20-35 տարեկան կանայք:

Վերոնշյալ հանդիպումները իրականացվում են Երևան քաղաքում և ՀՀ մարզերում: Այս հանդիպումները ներառում են ներածական ինֆորմացիա սեռական բռնության, տեսակների, հետևանքների վերաբերյալ: Տրամադրվում է տեղեկություն այն մասին, թե ինչպես պետք է վարվել սեռական բռնության վտանգի առկայության դեպքում:

Տրամադրվում է տեղեկություն ՋՅ-ում առկա ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև իրավական ընթացակարգերի, որոնցով պետք է անցնեն սեռական բռնության ենթարկված անձինք իրավապահ մարմիններին դիմելու դեպքում:

2. Վերապատրաստումներ հիմնախնդրի հետ առնչվող մասնագետների հետ.

Իրականացվում են դասընթացներ հոգեբանների, սոցիալական աշխատողների, ոստիկանության աշխատակիցների և այլ մասնագետների համար, որոնք իրենց մասնագիտական աշխատանքի շրջանակներում առնչվում են սեռական բռնության հետ:

Դասընթացները նպատակ ունեն այս մասնագետներին տրամադրել ընդհանուր տեղեկություն սեռական բռնության վերաբերյալ, սեռական բռնության հետևանքների վերաբերյալ, միջամտության ձևերի, երկրորդային զոհականացման և այլ կարևոր հարցերի շուրջ:

3. Կանխարգելիչ դասընթացներ.

Այս դասընթացները իրականացվում են ծնողների և 6-18 տարեկան երեխաների հետ: Սեռական բռնության կանխարգելման համար կարևոր է խոսել մարմնի անձեռնմխելիության, մարմնի սահմանների, թույլատրելի և անթույլատրելի հպումների մասին: Ծնողների հետ իրականացվող հանդիպումների ժամանակ ներկայացվում է մարմնի անձեռնմխելիության վերաբերյալ երեխաների հետ խոսելու անհրաժեշտությունը, տրամադրվում են հմտություններ տարբեր տարիքի երեխաների հետ խոսելու համար, ներկայացվում են ՋՅ-ում տարածված սեռական բռնության տեսակները: Երեխաների հետ իրականացվող դասընթացների համար ՍԲԾԿ-ն ունի մշակված դասընթացներ՝ ըստ տարիքային առանձնահատկությունների:

Շահերի պաշտպանություն

2010 թ. աղմկահարույց դատական գործը, որ վերաբերում էր Նուբարաշենի թիվ 11 դպրոցի ուսուցչին, որը երկար տարիներ սեռական բռնության բռնի գործողություններ էր կատարում իր սաների՝ Նույն դպրոցի աշակերտների նկատմամբ, հանրային պատմությամբ, կոտրեց սեռական բռնության վերաբերյալ այն կարծրատիպը, որ ՋՅ-ում սեռական բռնություն չկա: Այս դեպքը ցույց տվեց, որ անգամ երեխաները, որոնք գտնվում են պետական հոգածության ներքո, պաշտպանված չեն սեռական բռնությունից: Այս գործով դատավճիռը խիստ մեղմ էր (չնայած որ այդ շրջանում նախատեսվող պատժի առավելագույն չափն էր): Նախկին ուսուցիչը դատապարտվեց 3 տարի 4 ամիս ազատազրկման իր աշակերտների նկատմամբ տևական ժամանակաշրջան սեռական բռնության գործողություններ կատարելու համար:

Դատական գործընթացի մոնիթորինգին հետամուտ եղան նաև ՍԲԾԿ աշխատակիցները:

Այս դեպքից հետո ՍԲԾԿ-ի նախաձեռնությամբ ձևավորվեց աշխատանքային խումբ, որը մշակեց ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխի «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններին» վերաբերող 138-142 հոդվածների փոփոխությունների և լրացումների նախագիծ, որն էլ հետագայում ՀՀ ԱԺ պատգամավոր, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի պատգամավորական նախաձեռնությամբ ներկայացվեց ԱԺ քննարկման և ընդունվեց 2013 թ. դեկտեմբերի 21-ին:

Այս նախաձեռնությունից հետո կազմակերպությունը կարևորեց շահապաշտպան գործունեությունը և ներառեց այն որպես առաջնահերթություն: Շահերի պաշտպանության շրջանակներում կարևորվում են ֆեմինիստական արժեքներն, այդ թվում բռնություն վերապրածների ճայնը լսելի դարձնելու կարևորությունը:

Շահերի պաշտպանության միջոցով ՍԲԾԿ-ն նպատակ է հետապնդում՝

- դարձնել օրենսդրական համակարգը առավել ներառական, հասցեական և իրավունքահեն լրբիստական աշխատանքի միջոցով,
- դարձնել սեռական բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայություններն առավել գենդերազգային, մասնավորապես՝ նպաստելով դատաիրավական համակարգի կողմից զոհակենտրոն և կարծրատիպերից զերծ մոտեցման որդեգրմանը:

Փաստերի վրա հիմնված շահերի պաշտպանությունը օգնում է ՍԲԾԿ թիմին ապահովել իր գործողությունների հավաստիությունը, իսկ որդեգրած փոխհատվող (intersectional) սկզբունքը դարձնել շահերի պաշտպանությունը մի գործիք, որը կնպաստի սեռական բռնության ենթարկված կանանց տարբեր խմբերի և անչափահասների իրավունքների պաշտպանությանը և արդարադատության մատչելիության ապահովմանը:

